№ 132 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 20

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 20 № 132

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

սրանով յայտարարում է, որ այս տարվայ սեպտեմբերի 1-ից բացվում է երեք պատրաստական դասատուն։ Այդ դասարաններում ընդունելութիւնը կը կատարվի քննութիւնով։ Պատրաստական դասատուններում մտնելու համար կանոնները և ծրագիրները կարելի է ստանալ առևտրական ուսումնարանի շինութեան մէջ՝ Հալաբար Պրովիանտսկի հրապարակ, ամեն օր ցերեկվայ ժամը 9-ից մինչև 1 ժամը։ Ուսման լիակատար ընթացքը 6 տարվայ է։ Պատրաստական դասարաններում ուսման տարեկան վարձը քառասուն (40) ռուբլի է։ Ընդունելութեան քննութիւնների երբ լինելու մասին առանձին կը յայտարարվի։

(ու.կ.ե.) առ 2—5

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՈՒՐՃ“

ամսագրի բաժանորդագրութիւնը։

Բաժանորդագինը տարեկան 10 ռուբ.։ Ազգային դպրոցների ուսուցիչների, ուսուցչուհիների, ուսանողների, գիւղացիների, արհեստաւորների և բանւորների համար 8 ռուբլի։ Ամսավճարով բաժանորդագրվելն է 85 կոպէկ։ Բաժանորդագրութիւնը Թիֆլիսում բացի խմբագրութիւնից (Ճավճավաձեան փող., տ. № 12) ընդունվում է նաև «Գուտենբերգ» գրախանութում (Երևանեան հրապարակ)։ Դրսից դիմել՝ Тифлисъ «Мурчъ».

«ՄՈՒՐՃ»-ի յուլիսի համարը (1906 թ. № 7) լոյս է տեսնելու յուլիսի 1-ին և չի ուղարկվելու այն բաժանորդներին, որոնք չեն լրացրել այս տարվայ բաժանորդավճարը։

(առ.) 1—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազդեցութիւնների օրակում. Վերջին տեղեկութիւններ. Կովկասեան պատգամաւորների ճառերը. Երևանի շրջակայքում. խաղաղութեան շուրջը. Տեղեկատու Զանգրզուրի. Նարմուծիներ. Ուսուցչական համաժողովը. Զարդերի ապառնալիքը. Թիֆլիսի վաճառականների ընդհանուր ժողովը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐԱԿՈՒՄ

I

—Քանի երկրի մէջ չը կան ինքնավարական մարմիններ, անկարելի է մեզ համար խելացի և նպատակայարմար երդանակով կազմակերպել մաքառման գործը։

Այդպէս են ձևակերպում իրանց միտքը հակաժանտախտային այն խորհրդակցութեան անդամները, որ տեղի ունի ներկայումս Թիֆլիսում և որի մասին մենք տեղեկութիւն էինք տուել մեր լրագրում։

—Քանի որ շարունակվում են հայ-թուրքական սուր յարաբերութիւնները, անկարելի է ոչով կերպով առաջ տանել հակաժանտախտային կռիւը։

Այդպէս են խօսում այն տեղերի ներկայացուցիչները, որոնք եկել են հայ-թուրքական ընդհարումների շրջանների։

—Քանի որ կը շարունակվի քոչհորական ոստիկանութեան ներկայ անկարգ վիճակը, դժուար կարելի է յուսալ, որ ժանտախտը արմատապէս վերացվի մեր երկրից։

Այսպէս են ձևակերպում իրանց միտքը այն ներկայացուցիչները, որոնք եկել են քոչհորական անասնապահութեան վայրերից։

II

Խորհրդակցութիւնը, որի մասին մենք խօսում ենք այսօր, ահա, վեցերորդ օրն է, որ սկսած յունիսի 15-ից, անընդհատ նիստեր է անում և քննում է այն բոլոր խնդիրները, որոնք վերաբերում են ժանտախտի դէմ մաքառելու գործին։

Խօսքը տաւարի ժանտախտի մասին է։ Դա մեր գիւղի համար դատարկ մի խնդիր չէ։ Դա նրա տնտեսական ցաւերի տարեգրութեան կարևոր էջերից մէկն է։

Ոչքան գիւղը քայքայվել, մանկացել են ժանտախտի պատճառով, որքանը նրանից նոր-նոր տարիներ անցնելուց յետոյ հնարաւորութիւն չունեն վերականգնելու նախկին իրանց տնտեսական վիճակը։

Եւ միևնոյն ժամանակ օրքան երկիւղ է ապրում իւրաքանչիւր գիւղացու սրտում, թէ մի գուցէ նորից բռնկվէ ժանտախտը և դարձեալ խլէ աշխատաւորից նրա լծկան եզը, նրա կթան կովը, նրա հարստութիւնը։

III

Մենք վերև առաջ բերինք երեք ձևակերպութիւն, որոնք ցոյց են տալիս թէ ինչպէս հակաժանտախտային մաքառման գործը կապված է ուրիշ ազդող հանգամանքների հետ։

Բայց միայն դրանք չեն ազդեցութիւնները, կան և ուրիշները։

—Պէտք է գործողը, պաշտօնեան, ծառնօթ լինի տեղական ազգաբնակութեանը, նրա լեզուին և կարող լինի անմիջական յարաբերութիւններ պահպանել նրա հետ։

—Պէտք է մասնագէտները պարբերական ժողովներ կազմեն և միահամուռ ոյժերով մշակեն իրանց գործունէութեան ծրագիրը։

—Պէտք է կառավարութիւնը չափազանց ճշտապահ լինի այն վարձատրութեան վերաբերութեամբ, որ սահմանված է օրէնքով տալու գիւղացուն՝ սպանված կամ պատուաստումից յետոյ մեռած կենդանու համար։

Եւ այլն, և այլն։

Մենք կարող էինք առաջ բերել ժողովում յայտնած դարձեալ մի շարք ձևակերպութիւններ, որ արեց խորհրդակցութիւնը այն հանգամանքների մասին, որոնց անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ հակաժանտախտային գործի խելացի կազմակերպութեան համար։

IV

Մեր առաջ բերած օրինակները ցոյց են տալիս թէ ինչպէս տնտեսական երևոյթները կապված են մէկը միւսի հետ և թէ երկրի անկարգ ու անբարեշէն վիճակը ինչպէս քայքայիչ կերպով է ազդում տնտեսական կեանքի զանազան արտայայտութիւնների վրա։

Այնտեղ, ուր, օրինակ, հայ-թուրքական լարված յարաբերութիւնների շնորհիւ հաղորդակցութիւնը կատարվում է գաղտագողի, ոչ սովորական ճանապարհներով, ուր հանող պաշտօնեան անկարող է կարգադրութիւններ անել և որոշ պահանջներ իրագործել, ինչ լուրջ խօսք կարող է լինել գիտութեան կամ օրէնքի մշակած կանոնների անշեղ իրագործութեան մասին։

Թէ ժամանակաւոր և թէ մշտական ձախորդ ազդեցութիւնները կաշկանդել էին տարիներ շարունակ մեր տնտեսական կեանքի զարգացումը և նրանց քայքայիչ ոյժը աւելի ու աւելի ակներև է դառնում հասարակութեան համար, երբ մանաւանդ ճգնաժամի տարիները բացում են միանգամից շատ անպատեհութիւններ մեր առաջ։

V

Մի թէ նոյնը չենք տեսնում մեր գիւղացու տնտեսութեան միւս ճիւղերում։

Մենք քանի-քանի անգամ արձանագրեցի ք մեր լրագրի էջերում, թէ ինչպէս երկրագործական աշխատանքները կրճատվել, իսկ որոշ տեղերում նոյնիսկ բոլորովին խանգարվել են հայ-թուրքական ընդհարումների պատճառով։

Մենք յիշատակեցինք, թէ ինչպէս մրսելի Չարդը կանգ է առել հայ-թուրքական ընդհարումների շնորհիւ։

Մենք հաղորդեցինք թէ ինչպէս շերամապահութիւնը, օդագործութիւնը և մի շարք ուրիշ արդիւնագործութիւններ ճնշվել և դադարել են երկրի անկարգ և անապահով դրութեան պատճառով։

Երկիրը քանդվում, քայքայվում է և մենք, որ առանց այն էլ մեծ կարիքների և պակասութիւնների ցաւերով էինք մոտանցվում, դատապարտված ենք տեսնելու թէ ինչպէս աղքատանում է երկիրը և դժուարանում է մեր զորը վերականգնելու։ Եղածը և նոր զարկեր տալու նրա բարգաւաճմանը։

Ա. Թալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վաղարշապատ, 16 յունիսի

Այսօր Վանքի միաբաններից «իրանց կոչման հարազատ» 13 վեղարաւորներ, գլուխ ունենալով իրանց Սուքիաս և Նահապետ արքեպիսկոպոսներին և Կարապետ վարդապետին, մի բողոքագրով դիմեցին Վեհափառին, փսխելու յունիսի 7-ի տպված կօնդակը։

Վեհափառը «ըմբոստներ» անուանելով, պատեց բողոքագիրը, ապա բացարձակ յայտարարեց, որ ով չէ ընդունում յունիսի 7-ի կօնդակը, Վանքի դուռները բաց են, կարող են գնալ։

Պ. Աղազդեան

—

Գանձակ, 16 յունիսի

Միրզիկեցի մի պատանու թուրքերը անցեալ շաբաթ մոթել են գիւղի մոտերքում, կասկածը ընկել էր հարևան թուրք Ահմադլու գիւղի վրա։ Գաւառապետի օգնական Լօկօդօշը ահմադլուեցիներից 300 ռուբլի տուգանք առնելը յանձնել սպանվածների ծնողին։

Երէկ, քաղաքս լարված դրութեան մէջ էր, այսօր փոքր ինչ խաղաղ է։ Երկու օր եկող անձրևներից եղտակը ցրրտեց։ Քաղաքիս աղքատները անասելի կարիքի մէջ են։

«Ծագան»

—

Շուշի, 14 յունիսի

Գեներալ Գօլօշչապով երկու անգամ հայերին ուղարկելով և ինքն անձամբ դիմելով Թուրքի «Բաղարը», բանտը և այլն, վերադարձին շատ քիչ թուրք դտաւ «հաշտութեան թափօրին» հետևելիս և զայրացաւ։ Իր դռան առաջ կանգնած նա ժամերով խրատում, սաստում և սպառնում էր հային և թուրքին՝ հաշտվել և հաշտվել։ Թուրքերին յանդիմանելիս նա կանգ առաւ նրանց վերջերս Աղդամում (!) հայերի ձեռքով գերի վերցրած 49 պարսիկների վրա և խիստ յանդիմանական տոնով շեշտեց, որ այդ լուրը դուրս եկաւ մի հանելուկ։ Թուրքերն այդ լսելով՝ միայն աչքերը գետին ձգեցին ու կարմրեցին։

Գեներալը հայ և թուրք պատգամաւորների հետ գնաց Աղդամ հաշտեցնելու։ Աղդամի քաշերը լոյս աշխարհ չեն դուրս եկել. իսկ ամբոխը սառն վերաբերմունք ցոյց տալով խնդրել է 10 օր ժամանակ։

Զառուլում անհետացած ռուս սորժենիկին և 13 հայերին գտնելու համար գնացած կօզակային խուզարկու խումբը վերադարձել է, իր հետ բերելով հայերի շորերից և ապրանքից մի քանի կտոր, իսկ ռուսի կրծքի խաչը իր անուան փորագրութեամբ։ Ինչի՞ տեղ են ծառայելու արդեօք այդ խաչում ապացոյցները։ Ճանաչել են և աւազակներից ութին և բերել բանտ։ Սրանք յայտնել են հայերի տեղը, կօզակները կամեցել են գնալ, բայց գնդակների տարափները յետ են դարձրել։

Դայբալուից տարած գերիներից, հրաշքով, 15 օրից յետոյ, ազատվել է մի 13 տարեկան պատանի։ Նրա պատմելով՝ թուրքերն իրան տարել են քաղաքումս Նաչաֆ-Դուլի-աղայի տունը։ Աչքաբաց պատանուն տեսնելով նրան առաջարկել են թուրքանալ, որ խնային իր կեանքը։ Պատանին համաձայնվել է երեսանց։ Մի քանի օրից յետոյ Նաչաֆ-Դուլի-աղան գնում է «ժողովի»։ Տանեցոց մի մասն էլ դէս ու դէն է ցրվում։ Մութ երեկոյեան սենեակում մենակ է մնում պատանին։ Նա նայում է պատի ճակատին. այդտեղ կախված է ազգի մօսին հրացանը և փամփուշտակալը։ Պատանու սրտում ծագում է հերոսութեան մի խիզախ քայլ, նա... վերցնելով հրացանը և փամփուշտակալը, լուսամուտով կամացուկ դուրս է հանում, իջնեցնում գետին և ինքը սենեակից դուրս գալիս։ Դռան առաջ նրան հարցնում են դուրս գալու նպատակը. նա յայտնում է, որ արտաքնոց գնալու կարիք է զգում։ Իջնելով բակը նա վերցնում է հրացանը, լցնում, փամփուշտակալը ճիաը գցում և ամենայն զգուշութեամբ հեռանում թուրքերի թաղից, իջնում քաղաքից դուրս, Հիւնսոի գլուխը ու թեքվում քարտաշկերով դէպի Ղայբալի։ Քանի բօպէից յետոյ լսվում է հարայը և գնդակների ձայներ։ Նրան հետևում են. նա երկիւղ կրելով ճանապարհը կորցնելուց և բռնվելուց՝ մտնում է մի քարի տակ և այդտեղ կուչ գալիս այնքան, որ թուրքերը գալիս անցնում են ու յետ դառնում հայհոյելով և ոչինչ չը գտնելով։ Այդպէս, հերոս-պատանին ամբողջ գիշերը քարանձաւներով իրան համար ճանապարհ է բաց անում և առաւօտեան լուսաբացից վաղ հասնում իրանց գիւղը։

—

Շուշի, 14 յունիսի

Հաշտութիւնը վատահութեան և ապահովութեան ոչ մի գրաւական չունի։ Թուրքերը շարունակում են յամառութեամբ նստել իրանց տեղը և հայերի մասը չը գնալ՝ նրանց օրինակին, ճարահատեալ, հետևում են և հայերը։ Բոյկոտը շարունակվում է առաջվանից աւելի խիստ։ Գօլօշչապովը, ըստ երևոյթին, սրտանց ցանկանում է հաշտութիւն, բայց խիստ միջոցների չէ դիմում, օրինակ, նա որքան թէթև սրտով յայտնում է ու անցնում 49 պարսիկների գերութեան սուտ լուրի մասին։ Ինչու՞ սուտը բռնել և չը պատժել։ Իսկ եթէ դրանից Պարսկաստանը տակն ու վրա դառնար և հայերին կոտորէին... Ինչու՞, ինչու՞ չը պատժել։

—

Ոսկանապատ, յունիսի 12-ին

Այսօր, ցերեկվայ ժամի 11-ին, գիւղից մի վերստի վրա, այգիների և անտառի արանքում ոսկանապատցի փայտահատները ենթարկվեցին մի խումբ ոտքից մինչև գլուխ զինված թուրք սրիկաների յարձակման և Մանուէլ Միրզայեանցը, որը այդ ըօպէում սայլի արգելակն է (тормазъ) ձգելիս լինում, տեղն ու տեղն սպանվում է եղեռնագործների համազարկով։ Ընկերները իրանց ձգում են թաւուտները և մի կերպ ազատվում վերահաս մահից, թէև գնդակի տարափը շարունակվում է տեղալ նրանց ետևից համազարկերով։ Հարայի գնացող գիւղացիները գտնում են տարաբախտ երիտասարդ Մանուէլին իր սայլի մօտ անշնչացած. նրանից վերցրել էին հրացանը, փամփուշտակալը, գտակը, չուխէն և ուրիշ գործիքներ։

Աւազակային խմբի երկու անդամներին են կարողանում ճանաչել. դրանք տիրահռչակ թոփալհասանլուեցի եղբայրներ են։ Միամիտ գիւղացիները, չը նայած որ հայ և թուրք ազգերի յարաբերութիւնը լարվելուց դէսը տուել են 9-ը անմեղ զոհեր առանց տեղերից շարժվելու և սա էլ տասներորդն է, այնուամենայնիւ շարունակում են դեռ հաւատալ, որ իրանց աղունացկեր քիրվաները իրանց վնաս չեն տայ...

Ուշագրաւն այն է, որ դէպի սար ու դաշտ երթևեկող թուրքերին առանձին ճանապարհներ են յատկացված, բայց նրանք ստիպին քարվանների շարունակում են իրանց անցուդարձը Ոսկանապատի միջով դինված և այն էլ մի քանի սարաժենիկների առանձին հոգատարութեան տակ։ Հայի բողոքները յաճախ մնում են առանց հետևանքի, իսկ թուրքինը կատարվում է 24 ժամում... Դրութիւնը շատ ծանր է, հետևանքը անմտիթար, աւազակների ինքնագործը դէպի սպանութիւնը և կողոպուտը անգուսպ և սանձարձակ... էլ ինչ սպասել իրերի այս դրութիւնից...

Նիկ. Գրիգորեանց

—

Գանձակ, 14 յունիսի

Ոսկանապատ գիւղից 1½ վերստ հեռաւորութեան վրա գտնվող «Մոշուտի թալա» կոչվող մասում, երէկ գնդակահար են արել ոսկանապատցի Մանուէլ Պետրոսեանին։ Միւս ընկերներն փախչելով, հրաշքով ազատվում են։ Հայերը ճանաչել են չարագործներին. նրանք են հարևան Թոփալ-հասանլուեցի եղբայրներ Իսմայիլ և Սօյուն Ուսուբ-օղլին, Թունանլուեցի Փաշա-Զամարդալի-օղլի, Նաղի Բելբալայ Մամադ-օղլին, Զրաղլուեցի Մուսա Սօյուն Ալի-օղլին, և Ահմամադ Ալի Մեշադի Հասան-Ալի-օղլին։ Գիւղացիք այս մասին այսօր գանգատվեցին գաւառխս երկրորդ մասի պրիստաւին և նահանգապետին։

Բանանց գիւղի արտերի պահապան Գրիգոր Աւետեանին, «Գեօլի ղը աղ» կոչվող հողերում, դարան մտած տեղից թուրքերը մի քանի անգամ խմբովին հրացան ալ ձակեցի։ և վիրաւորեցին։ Ղարուղչիներին անգամ քոչի վրա հսկող կօզակները զինաթափ են անում։ Աւետեանը ճանաչել է բոլոր թուրքերին. դրանք այն թուրքերն են, որոնց մասին թուրքերն զիտութեամբ լուր էին տարածել, թէ նրանք ձերբակալված են։ Այս հրոսակախումբը բաղմանալուցի բէգերի «գուլերն» են, որոնք խաղաղ ժամանակում հայերի մալը կրելով յանձնել են թուրք յայտնի բէգերին... Քաղաքումս երէկ մի հայ թուրքից գնած թարխունից կերաւ և թունաւորվեց Լբժիշկի ձեռք առած միջոցով փրկվեց մահից։

Ա. Սահակեան

—

Գանձակ, 13 յունիսի

«Կոչ-Դէվլեթ»-ը հայերի մէջ բաւական թափ ծախվում, տարածվում է։ Ցանկալի է, որ թուրք խաւար մասի մէջ աւելի լայն կերպով տարածվի—այդ են մտածում բոլոր խաղաղութեան կ ասակից անձինք։ Հեռաքրքրվելով թէ ինչ ընդունելութիւն է գտել թուրք հասարակութեան շրջանում կամ մեծ քանակութեամբ տարածվում է թէ ոչ—դիմում եմ Գանձակում լաւ հռչակ ունեցող մի թուրք ինտելիգենտի՝ իմանալու նրա կարծիքը... «Մեր Գանձակի թուրքերն ասում են հայի շէյթանութիւն է» (էրմանինն շէյթանլըղը դը էրմանինն բիշլըղը դը. եթէ ինտելիգենցիան այս բարբարոս և վայրենի կարծիքի է, ապա ի՞նչ էք ուզում միւսներից։

Գեներալ-նահանգապետի հրամանով արգելել են «Բիւրօ կագէթ» լրագրավաճառին ծախել հետևեալ թերթերը. «Русскій Народъ», «Курьеръ», «Голосъ», «Дума», «Труд. Россія», «Впередъ», «Призывъ» ռուս լրագիրները։ Երէկ գործադուլ արին մի քանի արհեստանոցում բանող կօշկակարները։ Երէկ դարձեալ վարունից թունաւորվեց Լ. Ա...եանը. մածունն է նրան ազատում մահից։ Հայերը որոշեցին դադարեցնել գաղտնի կերպով թուրքաց մսից հայոց մասը վարունգ ներմուծելը։ Թունաւորման երկրորդ դէպքն է։

Սագան

—

Գանձակ, 17 յունիսի

Գաւառներում ուղղակի գողութեան չափ ու սահման չը կայ. թուրքերը վիտում են հայ շրջակայքում. անասունները չէ կարելի գիւղի ամենամօտ մասերում անվտանգ պահել։ Ծառերի, քարերի տակ դարան մտած թուրքեր գընդակահար են անում խաղաղ շինականներին։ Երէկ, ամսիս 16-ին, չոլգառեցի Ցարութիւն և Ցովհաննէս Մխիթարեանները, երեկոյեան գուռեանի եղները արձակելով, տանում են գիւղից մօտ երկու վերստ հեռաւորութեան վրա գտնվող «Մաքլիկ սեռ»-ում արածացնելու։ Երբ մթնում է, պատանիները քաշվում, գնում են «Մաքլիկ սեռի» փէշին գտնվող քարի արանքը, փռսում քնելու։ Հատ երևոյթին ցերեկով պատանիներին հետամուտ եղող հարևան ազգականները թուրքերը մտնում են այդ քարանձաւը, հրացանների փողը դնում են խեղճ պատանիների կրծքին և երկուսին էլ գընդակահար անում, գլուխները հեռները տանում։ Գաւառապետի օգնականը, որին խմաց են տալիս Բանանցում, գնում է դէպքի վայրը արձանագրութիւն կազմելու. յետոյ գնում է թուրքաց Աղեօխուշլու ղշլաղը, այնտեղից էլ Գանձակ։ Ոմանք ասում են, որ թուրքերը տարել են գութանի եղների մի մասը։ Ցայտնի արիւնարբու Աղիզ Քալբալայի Քաղիմ օղլուն գաւառխս երկրորդ մասի պրիստաւը ձերբակալելով բերել է Գանձակ, իսկ սրան ընկեր Սօյուն Հախվերդի օղլին, որը ապրել է հայի տանը, հայի հացով սնծացել, նա դեռ ևս շարունակում է իր գազանութիւնները...

Աւ. Սահակեան

—

Բաթում, 18 յունիսի։ Ազգաբնակութիւնը պտնիկայի մէջ է, որովհետև քաղաքում լոյս են տեսել բազմաթիւ պրօվոկացիական թուղթիկներ, որոնց հեղինակները կոչ են անում կոտորելու վրացիներին, հրէաներին և հայերին։ Նահանգապետը և զօրքի կոմենդանտը բնակիչների պատգամաւորութեան հանգստացուցիչ պատասխաններ են տուել։ Նահանգապետը արդիւել է բնակիչներին զէնք կրել։

Հեռ. Դոր.

—

Մեշէդ, 18 յունիսի։ Տեղական ազգաբնակութիւնը վերջին ժամանակներս եւրօպացիներին ամեն տեսակ վիրաւորանքներ է հասցնում։ Մօտ օրերս փողոցում խիստ վիրաւորել են անգլիական բանկի կառավարչին։ Ամբոխը ապա ծեծել է Ռուսաց բանկում կառավարչի ընտանիքին ուղեկցող կօզակին։

Հեռ. Դոր.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՃԱՌԵՐԸ

—

Պետական Դումայի յունիսի 12-ի նիստում Կովկասի իրերի դրութեան մասին խօսել են հետևեալ ճառերը.

Առաջինը խօսում է Դումայի անդամ Զերնովիտով, Անդրկովկասի պատգամաւորներ Տէր-Պետրոսեանցի և Թումանեանի առաջարկութեամբ կազմված հարցաքննդումի ծրագրի ատիթով։

Նա ասում է. իմ վրա պարտականութիւն է դրված բացատրութիւն տալ Կովկասում կատարվող անցքերի մասին, որովհետև այն բուլորը, ինչ որ կատարվում է Կովկասում, ոչ միայն մեր յիշողութեան մէջ է, այլ և մեր մտածողութեան ու սրտի մէջ է։ Կովկասը կառավարելու եղանակը այն տեղն է հասնում, որ ստացվում են երևոյթներ, որոնք Կովկասի և Անդրկովկասի վարչութեան վերաբերմամբ չեն կարող համարվել, իբրև անկանոնութիւններ, այլ պէտք է ընդունել որպէս յանցաւոր անգործունէութիւն, օրինազանցութիւն, և օրինական իրաւունքի սահմաններից դուրս գալ։ Դրութիւնը այնպէս էր, որ Կովկասի երկու փոքր ի շատ ստուար ազգութիւնները՝ հայերն ու թուրքերը, որոնք Կովկասի նուաճումից յետոյ երկար ժամանակ հաշտ կերպով ապրում էին միասին և որոնց մէջ ոչ մի ազգային խորութիւն չէր չէր նկատվում, այն օրից երբ ամենքիդ համար յայտնի բէկգիրքի ժամանակաշրջանը սկսվեց նրանք իրար դէմ դուրս եկան իբրև թշնամիներ։ Բէկգիրքի ազդեցութիւն թողեց և Անդրկովկասի վրա։ Այնտեղ ևս ճիշտ այնպէս սկսվեց միմնամեան ձգտումը բոլորին ամփոփել մի շաղխի տակ ռուսացման նպատակով, և հետզհետէ այդ ազգութիւնների մէջ ազատութեան ու անկախութեան բոլոր երևոյթները խեղդելու ձգտումը աւելի ու աւելի սասկացաւ։ Եւ երբ «տանել չեմ կարող, կը տրորեմ»-ի քաղաքականութիւնը այն ասիճանի հասաւ, որ ազգութիւններից մէկը արդարև բոլորովին քայքայվեց, դրանք թուրքական ծագում ունեցող լեռնական ցեղերն են, այն ժամանակ ուշադրութիւնը դարձրին մի ուրիշ ազգութեան վրա՝ այն է հայերի։ Կառավարութեան այդ կարգադրութիւնը հայերի մէջ զօրեղ շարժում առաջ բերեց, ամբողջ հասարակութիւնը այդ քայլը համարեց ամենախիստ անարդարութիւն և սկսեց կուել այդ բոլորի դէմ ամեն տեսակ միջոցներով։ Այդ միանգամայն բաւական էր, տեղական ադմինիստրացիայի տեսակէտից հայերին յեղափոխականներ համարելու, իսկ երբ մի գաղտնի հայացք ուրէշ կաղմվել է, այնուհետև անմիջական իշխանութիւններին թուում է, որ բոլոր թիւրիմացութիւններն մէջ մեղաւորը բացառապէս հայերն են։ Նրանց մէջ կազմվեց հայերի մեղաւորութեան կանխակալ կարծիքը, և այդ հողի վրա ծնունդ առան այն բոլոր թիւրիմացութիւնները, որոնք երբեմն հարուստ Կովկասը հասցրին ներկայ վիճակաւոր քայքայման։ Վերջին ժամանակներս տեղի ունեցած այդ բոլոր անցքերի հիմամբ մի շաղխի տակ ռուսացման նպատակով, և հետզհետէ այդ ազգութիւնների մէջ ազատութեան ու անկախութեան բոլոր երևոյթները խեղդելու ձգտումը աւելի ու աւելի սասկացաւ։ Եւ երբ «տանել չեմ կարող, կը տրորեմ»-ի քաղաքականութիւնը այն ասիճանի հասաւ, որ ազգութիւններից մէկը արդարև բոլորովին քայքայվեց, դրանք թուրքական ծագում ունեցող լեռնական ցեղերն են, այն ժամանակ ուշադրութիւնը դարձրին մի ուրիշ ազգութեան վրա՝ այն է հայերի։ Կառավարութեան այդ կարգադրութիւնը հայերի մէջ զօրեղ շարժում առաջ բերեց, ամբողջ հասարակութիւնը այդ քայլը համարեց ամենախիստ անարդարութիւն և սկսեց կուել այդ բոլորի դէմ ամեն տեսակ միջոցներով։ Այդ միանգամայն բաւական էր, տեղական ադմինիստրացիայի տեսակէտից հայերին յեղափոխականներ համարելու, իսկ երբ մի գաղտնի հայացք ուրէշ կազ

թիւնը շատ խիստ էր, մեզ չէին թոյլատրում պատժական խմբերը։ Զը կայ վրձին և գոյ-ոչ մի լրագիր ունենալ, իսկ երբ ցենզորան սկսեց աւելի դիւրութեամբ վարվել, այս վերջին տարվայ ընթացքում մեզանում լոյս տեսան 120 հրատարակութիւններ մեր լեզուով։ Որ մեզանում ազգինխարացման որևէ կրիտիկայից ստոր է, դուք ինքներդ էլ գիտէք։ Եթէ այսպիսի համեմատութիւն անենք, որ Ռուսաստանը մի ահագին ծով է և կովկասը՝ նրա ափերը, ուրեմն ես սխալված չեմ լինիլ, եթէ ասեմ, որ նրա բոլոր տականքները, բոլոր կեղտոտութիւնները ափն են դուրս հանվում։ Մեզանում արդարադատութիւն չը կայ։ Կան հատատութիւններ, կան չինովնիկներ, բայց արդարադատութիւն չը կայ։ Մահվան դատավճիռները զինուորական դատարանում և քաղաքացիական դատարանի դատավճիռները փաստաբէն հատատվում են ոչ թէ դատարանի շնորհիւ, այլ թարգմանների։ Մուսուլման ազգաբնակութիւնը չը գիտէ ռուսերէն լեզուն, իսկ ազգինխարացման էլ թուքերէն լեզուն։ Ես անձամբ ականատես եմ եղել, թէ ինչպես 8 բուլի ոռճիկ ստացող կոպեկնոց թարգմանները դատավճիռ էին արձակում։ Ազգարական հարցը մեզանում ևս սուր բնաւորութիւն ունի, ինչպես և ձեզանում։ Մենք ևս հողի մեծ կարիք ունենք, ինչպես որ կենտրոնական նահանգները. բայց ազգինխարացման այդ հարցը վճռեց բոլորովին այլ կերպ, քան թէ ձեզանում եղաւ։ Մեզ համար բնաւ հարկաւորութիւն չը կար ոչ մահմեդականների և ոչ էլ հեթանոսներին։ Նրանց եղանակը իրանց տեսակետով շատ լաւ էր։ Հայրենի Վրաստանը նրանք մատնեցին զօրքերի աւերին, իսկ մուսուլմաններին ու հայերին իրար դէմ գրգռեցին ու կռուացրին։ Վրաստանի մեծագեալ մասը ոչընչացվեց հեղ էլ։ Այս ամբիծնից ես յայտարարում եմ, որ մեր ու հայերի մէջ մնատեսական հողի վրա թշնամութիւն չէ եղել։ Մենք ապրում էինք իբրև բարի դրացիներ և սիրում էինք միմեանց։ Ապա ուրեմն ինչ բանում արտայայտվեց մեր թշնամութիւնը։ Զինված ընդհարումներ մենք երբէք չենք ունեցել։ Եթէ եղել են մանրակի սպանութեան դէպքեր, նրանք չէ որ մինչև այժմ էլ եղել են, բայց այսպէս հսկայական չափեր չէին ստացել։ Մեր ագինխարատները, գեներալները երևան հանեցին իրանց լիակատար մտակուութիւնը։ Արդէն ամբողջ երկու տարի է մենք լսում ենք արեան ծովում, մինչև ծունկերնիս քաշլում ենք գիակների վրայից... Թող նրանք հեռանան, թող նրանք կորչեն։ Բաւական է որքան որ զմայլեցինք այդ հրդեհների բոցերով, բաւական է որքան հրձվեցինք ընկած դիակների տեսարաններով, հերիք է ինչքան որ լսեցինք թշուառ մայրերի ու քոյրերի ողբն ու հեծեծանքը։ (Ծափահարութիւններ)։

Բահաթրեան։ Պ. պ. ժողովրդական ներկայացուցիչներ։ Հասկանալով թէ որքան թանգ է Դումայի ժամանակը, կաշկանդված կարճ խօսել, բայց ես իմ պարտականութիւն եմ համարում խօսել ի նկատի ունենալով հարցապնդումի չափազանց մեծ նշանակութիւնը, ոչ միայն ընդհանուր պետական նշանակութեան, այլ և հանրազգային տեսակէտից։ Մեր հարցապնդումին անելոց չկայ, ես ստացայ նամակներ և հեռագիրներ չափազանց լուրջ բնաւորութիւն ունեցող խնդիրքներով։ Դրութիւնը ընդորոշելու համար թոյլ կը տամ ինձ կարդալ ձեզ մի քանի բաղուածքներ. (Կարդում է Կովկասից ստացված նամակները և հեռագիրները, որոնց մէջ նկարագրված են ջարդերը և ադերսում Դումային գրգռեցնել արիւնհեղութիւնը)։ Պ. պ. ժողովրդական ներկայացուցիչներ, գրեթէ էք արդեօք դուք, թէ որպէսի ուրախան է անցնում այնտեղ երկրի վրայով,—ուրախան սպանութիւնների կարկուտով։ Բայց նա—հեռաւոր ծայրերկիրն է, որը ոչ միայն մարդիկ, այլ կարծեմէ Աստուած ինքն էլ մոռացել է։ Այն ինչ թշուառութիւնների համագումարը 1 տարվայ ընթացքում միմիայն Գանձակի նահանգում իր զոհերի թիւով և աւերածութիւնների չափով գերազանցում է բոլոր հրէական ջարդերից միասին առած։ Եւ հայ-թուրքական ընդհարումներ անուանվող այդ սիրա կարացող գրգռայի վախանը չէ երևում։ Իսկապէս դա նոյնպէս մի զզուելի պրովոկացիա է, դա տրուլիա է։ Ես կանգ կառնեմ նրա առաջին տեսարանների վրա, որոնք ընորոշում են սարսափելի դէպքերի ամբողջ ընթացքը։ Ես խօսում եմ փետրվարեան արիւնահեղ օրերի մասին Բաքուում։ Դիլեմա են անցել դրանք, ես վկայ եմ և ցուցմունքներ եմ տալիս Պետական Դումային։ Երեք օր շարունակվում էին ջարդերը և սպանութիւնները, և ամբողջ քաղաքը յանկարծ պաշարման դրութեան մէջ ընկաւ, և մենք, պաշարվածներս, կեանքը վտանգի տակ դնելով էինք հաց և ջուր ճարում մեր երեխաների համար։ Պատուհաններից մենք դիտում էինք փողոցը, ես տեսայ, թէ ինչպես էին անցնում խէնչալներով և բէվօլվէրներով զինուորված և ամենքի վրա չար հայհոյանքներ նետող մարդիկ,—մարդիկ, որոնք գնում էին նոր զոհեր։ Համարեա իմ աչքերիս առջև սպանվեց բէալական դպրոցի մի աշակերտ, 10 տարեկան տղայ, որը անցնում էր միւս փողոցը։ Չարագործները խկոյն և եթ մերկացրին նրան։ Համարեա ըստէջ չէը անցնում, որ փողոցում սպանութիւն չը լինէր, երբ փողոցով անցնում էին կօզակների պահակներ և գրօզովօյներ։ Ես կնոջս հետ անցնում էի փողոցներով։ Մենք հարցնում էինք թէ ինչու չեն ընում յանցաւորներին և մարդասպաններին։ Մենք ստացանք որոշ պատասխան,—հրամայված չէ։ Այդպէս են իմ տեսողական և լսողական տպաւորութիւնները։ Ինձ թւում էին դրանք վայրենի, մինչև անգամ հալածիչներ։ Բայց ես ստուգեցի նրանց շատ անձանց վկայութիւններով։ Ես բաւականաչափ փաստեր ունեմ ապացուցանելու համար, որ ազգինխարացման չար կամք ունէր և աչքաթող էր անում։ Դրա մասին շատ է գրվել լրագիրներում և խօսվել միմիանցում։ Սենատոր Կուզմինսկու քննութիւնը խիստ կերպով դատապարտեց տեղական ազգինխարացման գործունէութիւնը։ Գանձակի նահանգը ամենագեղեցիկներից մէկն է և միևնոյն ժամանակ ամենաթշուառը համայն Ռուսաստանում։ Արդէն մի տարի է, որ թափվում է արիւնը, աւերվում են գիւղերը։ Սովամահ մարդիկ խելակորոյս են եղել, և նրանց հետ իրանց հաշիւն են տեսնում թարկել անօրէն սպանութիւն գործող այդ հերոսներին։ (Ծափահարութիւններ)։

ԵՐԵՒԱՆԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

—

Յունիսի 16-ին

Սոսկալի է իրականութիւնը, աւելի քան սոսկալի։ Նա ծանրանում է ձեր կրծքին, որպէս կօշմար։ Նա քոնում է ձեր կովորդից, սեղմում, խեղդամահ անում և դուք անզօր էք գտնվում մագաչափ անգամ փոխել այդ իրականութիւնը, նոյն-իսկ ազատ կերպով բողոքել այդ իրականութեան դէմ։ Մի տեղ պրովոկացիայի ուժով ստեղծած և չը դադարած հայ թուրքական կոտորածը, մի այլ տեղ է գլուխ բարձրացնում, մի տեղ դեռ չը ցամաքած անմեղ արիւնը, մի այլ տեղ է հոսում և շարունակում է այնքան երկար, որ կարծէք բոլորս էլ ընտելացել ենք այդ գրութեան հետ և հաշտվել սովորական աչքերով նայելու իրերին։

Սակայն կայ սրանից էլ սոսկալին, որի դէմ մարդու անզօրութիւնը հասնում է յուսահատութեան աստիճանի. այդ այն է, որ ոճրագործը, չարագործը դասաւորի դերումն է և դուք ստիպված էք այդ ոճրագործից պաշտպանութիւն հայցել։ Կառավարութիւնը ստեղծել է հայ-թուրքական գժտիքը և կառավարութեանն էլ դիմում են երկու կողմերը իրանց զոհերի համար և այս է պատճառը, որ յաճախ ստիպված են կառավարութեան այս կամ այն պաշտօնեայի մասին վատ չը խօսել, նրան չը բարկացնել, նրան աւելորդ անգամ չը թշնամացնել, որովհետև այդ աւելի սոսկալի է լինում։ Այդպիսի օրինակներ շատ կան. դեռ չէ դադարել Զարանդայի ծուխը Երմօլովի և Ֆրէյլիխի ձեռքերով նրած։

Ահա մի այդպիսի սոսկումի նախօրեակին կարծէք, գտնվում ենք մենք այժմ։ Աշտարակի շրջանից յուսահատութեան լուրեր են հասնում, նամակներ են տեղում սարսափի ապաւորութեան տակ գրված. «գիմեցէք նահանգապետին», թախանձում է մէկը նամակով, որ դեռ ասնել տայ Թուրքիկ գունդը—լեգեոնի մասին։ Ինչու։

Յունիսի 12-ին, Մողնի հայ և Զիլիբանդ թուրք գիւղերի սահմաններում մի թուրք է սպանվում և դիակը անյայտացնվում։ Այս դէպքի վրա Զիլիբանդի թուրքերը յարձակվում են մողնցի վար անող հայերի վրա և քշում են եղները, որոնց գալավայի գնալով կարելի է լինում դեռ բերել։ Դրանից յետոյ տեղի է ունենում թեթև հրացանագրութիւն։ Ուշի թուրք և Կարբի հայ գիւղերի մէջ, բայց առանց հետևանքի։ Եւ ահա յունիսի 13-ին վրա է հասնում դաւասպեռը—Լեմերմանը—հեռագրով պահանջած լինելով Երևանից թուրքիկ գունդը։ Յունիսի 14-ին կանչում է Կարբի և Մողնի հայ գիւղերից իւրաքանչիւր տանից մի մի մարդ և պահանջում է յանձնել դիակը, տալ սպանողներին։ Դրա մասին մտածելու համար տալով մի քանի ժամ ժամանակ, երեկոյեան նորից կանչում է և յայտնում, որ եթէ պահանջները չը կատարվեն, շուտով դալու է թուրքիկ գունդը, ոմբակոծել կը տայ գիւղերը։ Այս սպառնալիքը տարսափ է ազդում գիւղացիների վրա։ Զաստնդայի բարբրոսութիւնների սրտաճմլիկ նկարագրութիւնները, Գովկասի որ անկիւնը ասէք որ հասած չը լինեն. այդ մի բօպէում պատկերանում է գիւղացու երևակայութեան մէջ։

Յունիսի 15-ին Աշտարակ է հասնում արշաւախումբը երկու թնդանօթով և մի փոքր հանգստանալով՝ ճանապարհ է ընկնում դէպի Մողնի և Կարբի։ Այդ երկու գիւղերը դատապարտված են կանանցից և երեխաներից, «կարբուց փախչելու ժամանակ վիժել են երկու կին», վերջացնում է նամակագիրը այս խօսքերով իր նամակը։

Կը ոմբակոծվեն գիւղերը արդեօք, յայտնի չէ, թերևս չը ոմբակոծվեն, բայց մթթէ այն, ինչ որ տեղի է ունենում, պէտք է։ Մթթէ այս կոչվում է արդարադատութիւն. մի դէպքում, մի սպանութեան համար սպառնում են երկու գիւղ ոմբակոծել. իսկ մի ուրիշ դէպքում, տասնեակ սպանվածների համար, մէկի խաթրին էլ չեն դիպչում։

Այո, այսպէս է իրականութիւնը, դառը իրականութիւնը, այսպէս էլ կը շարունակվի, քանի որ ոճրագործը կը մնայ դատաւորի դերում։

***

ԱԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Երևան, 15 յունիսի

Կորած խաղաղութիւնը մեր երկրում վերականգնելու համար մարդիկ այժմ լարում են իրանց բոլոր ոյժերը, կամենալով մի շարք ժողովներ, կատարելով մտքերի հանդուրժողական փոխանակութիւն։ Ամեն մէկն իր իմացած փաստերն է հրապարակ բերում, իր մտածած միջոցներն առաջարկում և այդ ուղղութեամբ հայերի պէս, թուում է թէ, հաւատարպէս ջանքեր են գործ դնում և թուրքերը և, որ գլխաւորն է՝ կառավարութիւնը։

Դեռևէ այդ եղբայցութեան կարելի է գալ տեսնելով Երևանի փոխ-նահանգապետի ջերմ մասնակցութիւնը խաղաղութեան վերականգնելու խորհրդակցութիւններին։ Դրա մի լաւ ապացոյց կարող է ծառայել ամսոյ 14-ի երեկոյեան քաղաքային խորհրդարանի գահլիճում փոխ-նահանգապետ Կօվալեվի նախագահութեամբ կայացած հայերի ժողովը։

Փնտրվում էին թուրքերի առաջարկած 15-ի չափ միջոցները խաղաղութիւնը հաստատապէս վերականգնելու համար։ Մանրամասն կանգ չառնելով ամեն մի էկտի մասին, պէտք է շեշտենք այն մի քանիսը, որոնց առանձին կարևորութիւն էին տալիս հայերը։

Երկար ծեծելով դրամական վարձատրութեան հարցը, հայերը որոշեցին բաց թողնել այդ մի կէտը, որովհետև ինչքան էլ հայերը սկզբունքով անհրաժեշտ էին համարում նիւթական վարձատրութիւն տալը հակառակ կողմին, թէ նրանց սպանվածների և թէ կրած վնասների փոխարէն, սակայն դա գրստում էին անհարեն և նոյն իսկ վտանգաւոր մի պայման գլխաւորապէս այն կողմից, որ այժմեան պայմաններում շատ դժուար է առնչաւ կերպով երևան հանել ճշմարտութիւնը, գտնել իսկական յանցաւորներին և թէ հետևապէս՝ կարող է պատահել, որ անմեղ թեամբ։

Ապա ընտրվեցին հայերից 4 հոգի, իրանց այս վերոյիշեալ պահանջները ձեակերպելու համար։

Լ. Մարկոսեանց

ՏԵՂԵԿՍՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

—

Յունիսի 10-ին

Զանգեզուրում քոչը արդէն սար է բարձրացել և այժմ թուրքերը համախմբված Մինքէնդի, Գօրիսի և Ղափանի սարերում, ազատ են ամեն տեսակ նկատողութիւններից և պատրաստ, իրանց չար նպատակը իրագործելու։

Եւ երբ քոչը անցաւ, վերջացաւ, որին թուրքերը անչափ սպասում էին, հետզհետէ յարձակման հատ ու կտոր դէպքեր երևացին մեր գաւառի զանազան խորշերում, որոնք պարզօրէն թուրքերի անհանգստութիւն են ապացուցանում զարձեալ։

Նախ՝ Ղարաքեհան գիւղում, թուրքերը կամենում են մի խնձորենկցու սպանել, որ հազիւ հազ կարողանում է մի կերպ փախչել և ազատվել։

Երկրորդ՝ քանի օր առաջ, երբ մինքէնդցիները իրանց արտերը ցանելուց յետոյ Գօրիս էին վերադառնում, էկէ ճանապարհի վրա սաղալլարեցի երկու թուրք ասատածներ յարձակվում են երկու մինքէնդցու վրա, որոնցից քիչ հեռու գնում էին սարաժիրկեր. հայերից առնում են 60 ր. փող, մի նոր չուխայ և երկու ոչխար ու բաց թողնում։

Գօրիս գալով, նրանք եղելութեան մասին դիմեցին իշխանութեան։ Պրիստաւի հոգատար աշխատութեան շնորհիւ ոչխարները և չուխան յետ ստացվեցին։

Ուշթափայից էլ թուրքերը քշել տարել են գօրիսեցի պ.պ. Ղ. Պարոնեանի, և Ամարեան Պողոսի 25 գլուխ տաւարը։ Թուրքերը քշելիս, անցել են կազակների և օֆիցերի մօտով, որոնք կարծում են, թէ տաւարը նրանց սեփականութիւնն է։ Գաւառապետ պ. Միտկեվիչ եռանդուն միջոցներ է ձեռք առել տաւարը յետ դարձնելու։

Գաւառի ընդհանուր դրութիւնը շատ ծանր է։ Շուշուց կամ այլ տեղերից մեզ հասնող ամեն մի անախորժ լուր անչափ վատ տպաւորութիւն է գործում. մենք քաղաքներով և գաւառական լուրերով ենք ապրում։ Նրանց ժպիտը և նրանց լացը մերն է։

Սաղանդարեան

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—

Յունիսի 9-ին,—հաղորդում է «Դումա» լրագիրը,—Պետերօֆի խճուղու վրայով, Նարվի կայարանի մօտ, շրջակայում էին կօզակների մի պահակախումբ։ Յանկարծ մէկը բաժանվեց նրանցից և սկսեց բաժանել անցնող հասարակութեանը կոչեր առաջիկայ ընդհանուր քաղաքական գործադուլի մասին։ Սկզբում բանուորները հրաժարվում էին վերցնել, թերահաւատութեամբ վերաբերվելով «մարդկի ասպեներին», բայց կօզակը սկսեց համոզել, որ ոչ ոքի ձեռք չի տալ, և հաղորդեց, որ թուրքիկը բաժանում է «պինորան կամ կամպիերությեան» յանձնարարագիր։

—Հէլսինգֆորսից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. խլրտումները Աբօ քաղաքի ռուսաց զօրքերի մէջ, տեղական լրագրերի ասելով, հետզհետէ սաստկանում է ընդհանրապէս որ, որ իշխանութիւնը մինչև այժմ չէ գտնացրել իրանց պահանջները՝ սնունդը և զօրանոցային կենցաղը բարելաւելու մասին։ Երբ նշանակված ժամանակը լրացաւ և իշխանութիւնը չէր կատարել պահանջները՝ զինուորները ամբողջ գիշերը ադմբակում էին, մարսելիէզներ ու ուրիշ յեղափոխական երգեր էին երգում։ Ներքին գործերի մինիստրութիւնը զեկուցում է ստացել Տօբօլեան նահանգապետ Գօնդատատիից, որ խռովութիւններ են ծագել Տիմէրում քանակ գրած Տօբօլեան Սիբիրի պարտիներ։ Խռովութիւնների պատճառը հետևեալն է. Շտաբս-կապիտան Բախմաչէվը դեռ գանձապահ եղած ժամանակ իւրացրել է 75,000 բուբլի և, որպէսզի որ և է կերպով իր գողութեան հետքը թաղցնի, խնդրամատոյց է եղել ու ստացել զինուորական մինիստրութիւնից 10,000 բուբլի, իբրև թէ զինուորների համար նոր բաներներ ու լուսաբանները շինելու նպատակով։ Այդ բանի մասին քիչ ժամանակից յետոյ իմացան զինուորները։ Սկսվեց խլրտումը, որ յետոյ քաղաքական բնաւորութիւն ստացաւ։ Ժողովներից մէկում զինուորները որոշեցին զօրանոցի չը գնալ և օֆիցէրներին մեծարանքի պատիւը չը տալ։ Օֆիցէրներ Սեգեին և Վերենի դէմ սպառնական թռուցիկներ բաց թողին։ Նրանց բնակարանները շրջապատեցին գնդի 4-րդ վաշտի զինուորները, բայց յիշեալ օֆիցէրները վտանգը նախապատրաստեցին։ Հեռացել էին քաղաքից։ «Год.»

—«Род. Зем.» թերթը հաղորդում է, որ Աստրախանի գաւառում պահապան վարձված ռուսներ կօզակները, թւով 40 հոգի, որ ծառայում էին կալուածատէր Պարտոնենկոյի մօտ, հրաժարվեցին իրանց ծառայութիւնից և շուտկում վաճառեցին իրանց ձիաները, հրացանները և մտրակները։

—Տամբովում Սանդի կօզլովի գաւառում կօշէտալով գիւղի կանաչ գնացին աշխատելու տեղական «տորֆա (հողածուխ) հանքերում», բայց նրանց չընդունեցին բոլորին։ Այն ժամանակ գործադուլ կանաչ հեռացրին աշխատանքից բանով կանանց ու տարան իրանց հետ։ Դիզված հողածուխները նրանք շաղ տուին, որից յետոյ ձեռք բերին մի երկար ձող և նրա վրա կապեցին, դրոշակի փոխարէն, կարմիր թաշկինակ։ Այդ կարմիր դրօշակի հովանու տակ նրանք գնացին դէպի գիւղը։ Ճանապարհին հանդիպեցին հարևան գիւղի գիւղացիներին և խնդրեցին նրանց մի ճառ խօսել, թէ «ինչ են ուզում կարմիր դրօշակներով շրջող մարդիկ»։ Ճառից յետոյ կանայք ցոյցեր անելով մտան գիւղը կարմիր թաշկինակով ու անցան գիւղի մի ծայրից մինչև միւս ծայրը։ Ամբողջ ժամանակ նրանք երգեր էին երգում, ճառեր էին արտասանում կանայք և աղջիկները տղամարդու ու կինոջ իրաւունքի մասին։

—Նիժնի-Նովգորոդի արքունական գործարանի բանուորները քննելով մի քանի բանուորների յանցաւոր գործունէութիւնը, որոնք սև հարիւրեակային գրականութիւն են տարածում ժողովրդի մէջ ջարդեր անելու գրդռելով, որոշել են հրապարակորէն իրանց արհամարհանքը արտայայտել կառավարութեան այդ սխրահռչակ սպասաւորներին և պահանջել գործարանի վարչութիւնը հեռացնել դրանց ծառայութիւնից։ Բացի դրանից նրանք յայտնել են, որ իրանք անձամբ չեն ցանկանում պատժել սև հարիւրեակայիններին, որովհետև գիտակից բանուորները չը պէտք է երկիւղի ու վրէժխնդրութեան միջոցով կանեն կառավարութեան ծառաների հետ, մանաւանդ որ կառավարութեան պրովոկացիայի շնորհիւ է այդ բանը կատարվում, որպէսզի դրանով բանուորներին անժամանակ կռուելու դուռը կանչէ։ Այդ բանաձևին ստորագրել են 7000 բանուորներ։

—Երեցկից գրում են «Р. В.»-ին. Գաւառում ապրարական անկարգութիւնները հետզհետէ մեծ չափեր են ստանում։ Գիւղացիները ինքնագլուխ խմբերով քաղում են մարգագետինները ու տանում խոտը։ Այդպիսի դէպքեր տեղի են ունեցել Ստեպանի, Վլօրնեսի և Դրեզգալովեան համայնքներում։ Ամենասիրվում կողոպտել են կալուածատիրոջ տունը։ Շատ տեղերում հասարակական վճիռներով սահմանում են աշխատավարձի օրական գինը, տղամարդկանց համար 1—3 բուբլի։ Ուրիշ տեղից եկող բանուորներին հեռացնում են։ Միմիանցներ են կազմում անտառներում։ Որոշել են գործադուլի միջոցով կալուածատէրերին ստիպել ծախլու հողը գիւղացիներին։ Առհասարակ նկատվում է, որ շարժումը սկսվում է այն տեղերում, ուր անցեալ աշնանը անկարգութիւններ ու ջարդեր են եղել։ Անցեալ տարվայ կալանաւորութիւնները, աքսորները ու կօզակների մտրակները անկարող եղան արմատախիլ անել շարժումը։ Այժմ թէ գիւղացիներն են փորձառու դառել և թէ կօզակներն ու պահակները են զգեստակութեամբ գործում գիւղացիների դէմ։

—Սուջից հեռագրում են «Р. В.»-ին, որ այնտեղ հրդեհված են Պոտօլսկու կալուածքի շտեմարանները։ Սուջրինի շաքարի գործարանում ու հարևան Բիլսկի գաւառում անկարգութիւններ են կատարվում. պահանջված են դրագունները։ Լուր կայ, որ վիրաւորներ կան։

—Յունիսի 12-ին, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը տեղեկութիւն է ստացել, որ Սիբիրի երկաթուղու բանուորների մէջ մեծ խլրտումներ կան շնորհիւ բաղմաթիւ կրանաւորութիւնների։ Բանուորները պահանջում են անմիջապէս ազատել ընկերներին և վերընդունել ծառայութեան մէջ։

—Յունիսի 18-ին Թիֆլիսում, Նաթլուղի քաղաքամասում, 158 հոգուց բաղկացած զինուորների մի խումբ միտինգ է կազմում։ Դրագունները վրա են հասնում ու շրջապատում նրանց։ Միտինգին մասնակցող զինուորներից մէկը սկսում է քարէր նետել դրագունների վրա։ Այդ ժամանակ դրագունների մէկը հրացան է պարպում զինուորի վրա, բայց ընկերները չեն թողնում։ Այնուհետև նրանց շրջապատած երբ ասնում են երկաթուղային բատալիոնի զօրանոցի առաջից, դուրս են թափվում զինուորները ու ազատում կալանաւորած զինուորներին։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

—

Գ. Նիսա

Ուսուցչական համագումարի գ. նիստը բացվում է յունիսի 17-ին, պ. Յ. Մանանդեանի նախագահութեամբ, որ ժողովին առաջարկում է ամենից առաջ անցնել համագումարի նախագահի երկրորդ օգնականի ընտրութեանը։

Թէև այդ պաշտօնի համար ամենից շատ ձայն ստացել էր պ. Յ. Տէր-Միրաքեան, բայց որովհետև դա չէր կազմում բոլոր ժողովականների ձայնից մեծամասնութիւնը, դրա համար նա ընտրված չը համարվեց։ Այստեղ աւելորդ չեմ համարում յայտնել, որ մի քանի պարոններ այդ պաշտօնների համար քիչ ձայն ստացան նրա համար, որովհետև ընտրութիւնից առաջ հրաժարվեցին քուէարկվելուց. օր. պ. պ. Յ. Տէր-Միրաքեան, Աւետեան, Ե. Թօփչեան, Լ. Բարայեան, և այլն։

Համագումարը որոշեց երրորդ նախագահի ընտրութիւնը թողնել նիստի վերջին կատարելու։

Նախագահը համագումարի վերաքննութեան է առաջարկում 5—6 ուսուցչացուների հարցը։

Համագումարին մասնակցող 56 ապագայ ուսուցչացուներ բողոքում են ժողովին, որ իրանց պէտք է վճռական ձայնի իրաւունք տալ, և պահանջում են իրանց հարցը վերքննութեան ենթարկել, պատճառաբանելով որ դրա վերաբերմամբ համագումարը ապօրինի և անկանոն որոշում է կայացրել։

Նախագահը ամենից առաջ իրաւունք է տալիս այդ 56 ուսուցչացուներից մի քանիսին խօսելու, որպէս զի նրանք պատճառաբանեն և լուսաբանեն իրանց բողոքը։

Դրանով էլ սկսվում է ապագայ ուսուցչացուների հարցի վերաքննութիւնը։

Մի քանի հոգի ամենից առաջ բողոքում են այն բանի դէմ, որ հայոց դպրոցների նախկին ուսուցիչների հարցը որոշելիս, ապագայ ուսուցչացուներին ձայնից չէին զրկել, որ ուսուցչացուները չեն մասնակցել իրանց իրաւասութեան հարցը որոշելիս և վերջապէս որ ուսուցչացուների հարցը որոշելու ժամանակ ժողովականները չափազանց յոգնած են եղել, ապացոյց, որ նրանք ծանրաբեռնվածութիւնների են արժանացրել այդ հարցի վերաբերեալ եղած միմանց բոլորովին հակառակ և տարբեր կարծիքների պաշտպաններին։

Համագումարը ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ուսուցչացուների հարցի նկատմամբ եղած բողոքի առարկութիւնները բաւական ծանրակշիռ և արդարացի են, նորից ձայների մեծամասնութեամբ որոշում է ուսուցչացուներին համագումարի ամբողջ տեւողութեան ընթացքում վճռական ձայնի իրաւունք տալ։

10 րոպէ ընդհատումից յետոյ սկսվում է Գ. նիստի շարունակութիւնը պ. Ի. Յարութիւնեանի նախագահութեամբ, որը ժողովականներին ծանօթացնում է համագումարի օրակարգի խնդիրների հետ։

Ժողովականներից մի քանիսը առաջարկում են այդ օրակարգի մէջ մտցնել նոր հարցեր։

Պ. Արեղեան առաջարկում է դրա մէջ աւելացնել նաև համագումարի վերաբերմունքը էջմիածնում մօտ ապագայում գումարվելիք պատգամաւորական ժողովի, Ռուսաստանի ներկայ քաղաքական դրութեան և թուրք-հայկական ընդհարումների նկատմամբ։

Պ. Լ. Բարայեան առաջարկում է համագումարի ընդհանուր խորհրդածութեան և քննութեան նիւթ դարձնել նաև Պարսկաստանի հայոց բոլոր դպրոցների ուսուցչական միութեան կանոնադրութեան մշակելու հարցը և այլն։

Ժողովը լսելով այդ և մի քանի ուրիշ առաջարկութիւններ, որոշում է ամենից առաջ զբաղվել ռուսահայոց դպրոցների ուսուցչական միութեան կանոնադրութեան մշակմամբ, որ պէտք է կազմէ համագումարի զբաղմունքների ծանրութեան կենտրոնը, և ապա անցնել ուրիշ խնդիրների քննութեան։

Սկսվում է միութեան կանոնադրութեան քննութիւնը

Ժողովականներից մի քանիսը խօսում են կանոնադրութեան քննութեան ձեւի մասին։

Պ. Աւետեան առաջարկում է առ այժմ ի նկատի չունենալ նախկին ուսուցչական ժողովից ընտրված բիւրօյի ձեռքով կազմած կանոնադրութիւնը և ընդհանրապէս քննել հեռաւոր հարցերը. հայ ուսուցչական միութեան կանոնադրութեան նպատակը, կազմը, կազմակերպութիւնը և առանձին մարմինների յարաբերութիւնը ու նրանց իրաւասութեան սահմանները։

Մի քանիսը խօսում են ամենից առաջ միութեան նպատակի մասին, որի շարունակութիւնը թողնվում է Դ. նիստին։

Դ. Նիսա

Ամսոյ 19-ին բացվում է հայ ուսուցչական համագումարի Դ. նիստը։

Նախագահ պ. Ի. Յարութիւնեան ժողովին առաջարկում է որոշել համագումարի իրաքանչիւր նիստի արձանագրութիւնը կարդալ հետևեալ օրը և դա կազմել ոչ թէ անուանական, այլ համառօտ և ընդհանուր ձևով, միևնոյն ժամանակ ժողովականներից իւրաքանչիւրին իրաւունք տալով դրա մէջ արձանագրել իր կարծիքը առանձին և անուանական կերպով, եթէ նա դժգոհ է արձանագրված ձևից։

Այնուհետև համագումարը շարունակում է զբաղվել հայ ուսուցչական միութեան կանոնադրութեան նպատակի մշակումով։

Մի քանի տասնեակ ժողովականներ եռվարամասն պարզաբանութիւններով յայտնում են իրանց կարծիքը միութեան նպատակի մասին և առաջարկում են իրանց վերջնական բանաձևերը։ Բերենք այդ բանաձևերից մի քանիսը իբրև նմուշ միութեան նպատակի համար։

Պ. Սօլվեան, խօսելով հայ ուսուցչական միութեան իսկական նպատակի մասին, շեշտում է այն հանգամանքի վրա, որ ռուսահայոց դպրոցների ուսուցիչների միութիւնը երբէք չը պէտք է քաղաքական դոյն տալ։

Պ. Ա. Արապեան առաջարկում է հետևեալ բանաձևը միութեան նպատակի մասին. «Ընկերութիւնը ներկայացնում է Ռուսիայի հայոց դպրոցների ուսուցիչների պրոֆեսիոնալ միութիւնը։ Նրա նպատակն է ռուսահայոց դպրոցների ուսուցիչների մէջ արթնացնել ազգային գիտակցութիւն, զարգացնել նրանց մասնագիտական գիտելիքներ, ամրապնդել նրանց ընկերական կապերը, ուսումնասիրել դպրոցական գործի հարցերը, ուսումնասիրել ազգաբնակչութեան տնտեսական դրութիւնը, ազգաբնակչութեան մտաւոր զարգացման աստիճանը, ազգաբնակչութեան հոգեբանութիւնը, ազգաբնակչութեան հոգեբանութիւնը, ազգաբնակչութեան հոգեբանութիւն

հատակցական կապ հաստատել, ընկերակցական ոգին մշակել և նպաստել նրանց նիւթական ապահովութեան և մասաւոր զարգացման»։

Պ. Յ. Մանանդեան. «Ռուսահայ դպրոցների պրոֆէսիոնալ միութեան նպատակն է հոգ տանել իր անդամների նիւթական ապահովութեան և մասաւոր զարգացման համար և ձգտել ուսուցչի իրաւական դիրքը բարձրացնելու հայ դպրոցում։

Պ. Ա. Աթանասեան. «Հայ ուսուցչական միութեան նպատակն է բարոյական Ռուսաստանում ապրող հայ համայնքի իրաւասութեան տակ գտնվող ամեն տեսակի դպրոցներում ծառայող իր անդամների պրոֆեսիոնալ, տընտեսական և իրաւական դրութիւնը, կովելով ամեն տեսակ ոտնձգութիւնների դէմ, որտեղից և նա ըլլա»։

Պ. Լ. Բաբայեան դեռ անցեալ ժողովին առաջարկել էր հետեւեալ բանաձեւը. «Ռուսաստանի հայոց դպրոցների ուսուցիչները և ուսուցչուհիները կազմում են պրոֆեսիոնալ միութիւն (բառիս ամենաիսկական նշանակութեամբ), որի նպատակն է իր անդամներին կանգնեցնել իրենց իսկական և ժամանակի ընդհանուր պահանջներին համապատասխանող և բարաբարոյական ոլոր դրութեան ցանկալի բարձրութեան վրայ, ապահովելով նրա նիւթական և իրաւական դրութիւնը նպատակայարմար միջոցներով»։

Պ. Ս. Լիսիցեան. «Ռուսահայոց դպրոցների ուսուցիչներն ու ուսուցչուհիները միանալով կազմում են «Ռուսահայոց դպրոցների ուսուցչական միութիւն», որի նպատակն է պատագրել այդ ուսուցչութիւնը, նպաստելով նրա նիւթական ապահովութեանը, մասնագիտական և ընդհանուր մասւոր զարգացման և իրաւական դրութեան հաստատութեան, հայոց դպրոցական կեանքը ազատ սկզբունքների վրա հիմնելու համար»։

Պ. Ղ. Աղայեան նոյնպէս նպատակայարմար է համարում հայ ուսուցչական միութեան կանոնագրութեան դուռ պրոֆեսիոնալ բնաւորութիւնը և շեշտում է, որ դա պէտք է բովորովին ազատ լինի քաղաքական գունաւորումից։

Պ. Երզնկեան իր երկար և համոզեցուցիչ ճառով հաստատում է, որ հայ ուսուցչական միութիւնը պէտք է զուտ մասնական հիմքի վրա դնի։ Պարզաբանութիւնը և հարցի լուսաբանութիւնը համագումարի ժողովականների մի մասի հաւանութեան է արժանանում։

Լ. Բ.

ՉԱՐԴԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

«Дума» լրագրին յունիսի 10-ին հեռագրում են Վիլնայից։

Երէկ քաղաքում յամառ կերպով լուր էր պտտում, որ յունիսի 10-ին հրէաների ու ինտելլիգենցիայի Չարդ պէտք է լինի։ Երեւալիս Չարդի սպառնալից նշանները Նոյնանման Բէլօստոկի մէջ պատահածի հետ։ Մեծ քանակութեամբ թռուցիկներ տարածվել էին քաղաքի մէջ, որով հրաւէր էին կարդում Չարդի ենթարկել հրէաներին։ Վրդովմունքը ստատանում է Բէլօստոկի Չարդի ականատեսների, զօրքի, ոստիկանութեան և Չարդարարների կատարած գազանութիւնների պատմութիւններով։ Շատ հրէաներ Բէլօստոկից փոխադրվում են Վիլնա։ Հրէական պատգաւորութիւնը դիմեց նահանգապետին խնդրելով ձեռք առնել խիստ միջոցներ Չարդերի առաջն առնելու համար։ Նահանգապետը խոստացաւ և կրաշաւորից որ թոյլ չի տալ Չարդ կատարվի։ Խուզարկութեան են ենթարկվում գլխաճառնոցները և լրագրական վիճակները։

—Չարդերի մասին տարածված գազանական լուրերի ազդեցութեան ներքոյ Պետերբուրգի ազգաբնակութիւնը վերջին օրերս գտնվում է մեծ վրդովմունքի մէջ, այնպէս որ մի ամենաչնչին առիթ սարսափ է տարածում։ Յունիսի 9-ին ժողովրդական տան թատրոնում սրահում ներկայացման ժամանակ մի պարոնի ժամացոյցը գողացել են։ Պարոնը սկսում է բարձրաձայն խօսել իր հարեւանների հետ։ Հանդիսականները, չմտանալով թէ ինչումն է բանը, սկսում են փախչել դէպի դուռները։ Դերասանները ընդհատում են խաղը։ Սկսվում է ստատիկ իրարանցում, որը կարող էր սարսափելի կատաստրոֆ ստեղծել։ Հաւանաբար ոստիկանները, չմտանալով թէ ինչումն է բանը, սկսում են փախչել դէպի դուռները։ Դերասանները ընդհատում են խաղը։ Սկսվում է ստատիկ իրարանցում, որը կարող էր սարսափելի կատաստրոֆ ստեղծել։ Հաւանաբար յաջողվում է վերականգնել հանգստութիւնը։

—Բէլօստոկի Չարդի պատճառով լեհական սոցիալիստական կուսակցութիւնը նախապէս միջոցներ է ձեռք առել եռանդուն կերպով ճնշելու իր ազդի մէջ Չարդերը։ Լեհական Չարդի մանրամասնութիւնները ստատիկ կերպով ստացվեցան։ Այդ նպատակով 200 հազարից աւելի օրինակ թռուցիկներ են տպագրել կենտրոնական, Վարշավայի և այլ տեղերի սոցիալիստների լեհական կուսակցութեան անունից։ Այդ թռուցիկով կոչ են անում ազգաբնակութիւնը պրովոկատորներին պատժելու։ «XX Վեկ»

—Դիվնսկից «Дума»-ին հեռագրում են, որ ազգաբնակութիւնը լարված դրութեան մէջ է։ Պրովոկատորներ վերջին օրերս լուրեր է տարածած, որ Դվինսկին էլ պէտք է ենթարկվի Բէլօստոկի Չարդի օրինակին։ Սա հարբեցակը Բէլօստոկեան Չարդարարների նման լուրեր է տարածում, որ Դվինսկի Չարդն էլ պէտք է լինի իբրև վրիժառութիւն անպայտ մարդու ձեռքով սպանված պրիստաւ Վասիլեվի մահվան համար։

—Չարդերի սպառնալիքը մեծ յուզմունք է առաջացրել Եկատերինոսլավում։ Իշխանութիւնների հաւաստիացումները անգօր են հանգստացնելու Քաղաքից հեռանում են մարդիկ մեծ քանակութեամբ։

—Վերջին օրերս ներքին գործերի մինիստր Սոլսկին զեկուցումներ է ստացել Հիւսիսարեւմտեան երկրի և մի քանի հարաւային նահանգների նահանգապետներից, որ Բէլօստոկի Չարդի մանրամասնութիւնները ստատիկ կերպով ստացել են հրէա ազգաբնակութիւնը։ Ոչ մի հաւաստիացումներ չեն համոզում, որ անկարգութիւնները ամենախիստ կերպով կը ճնշվեն։ Առհասարակ և գործերը կանգ են առել։ Խոսվում են, որ մինիստրութիւնը պատրաստվում է յայտարարել բոլոր լրագրներում ներքին գործերի մինիստրի անունից հրաման նահանգապետներին Չարդերի առաջն առնելու համար խիստ միջոցների դիմելու։ Նահանգապետներից մէկի ասելով այդ միջոցը շատ կարող է մահաբեր լինել։ Ներքին գործերի մինիստրը անդամ Վինավերը ստացել է Բիժվից հետեւեալ հեռագիրը. «Բիժվի հրէաները սարսափահար են առաջիկայ Չարդի պատճառով։ Պրովոկատորներ են եկել և զանազան գրգռիչ լուրեր են տարածում։ Աղերսում ենք պաշտպանել մեզ»։ «Дума»

—Երկիւղալի հեռագիրներ են ստացվում նոյնպէս Պոլտավայի նահանգից։ Զօրամասների հրէաները ազերսում են Դումային ազատել իրանց Չարդից ու կոտորածից։ Սև հարիւրակը հոանդուն գործունէութիւն է սկսել թէ քաղաքում և թէ շրջակայ ազգաբնակութեան մէջ։ Նրանք թռուցիկներ են տարածում Զօրամասների զօրքերի ու կազակների մէջ, որով խնդրում են նրանց արգելք չը լինել Չարդին։ Ազգաբնակութիւնը ոտարկութեան մէջ է։ Շատերը փախչում են։ Դրութիւնը սարսափելի է։

—Ժիտոմիրից «Дума»-ին հեռագրում են, որ յունիսի 10-ին Ժիտոմիրում ոստիկանութեան նախաձեռնութեամբ կայացել է ճշմարիտ-ռուս մարդկանց ժողովը։ Ժողովի ճառախօսները գլխաւորապէս եղել են ոստիկանական պաշտօնեաները. օհօրոզչի վերահսկիչը, որի ազգանունը դեռ չէ իմացվել, դիմել է ժողովականներին մի կրակոտ ճառով և կոչ է արել բոլորովին ոչնչացնել, ներկայ ռուսական յեղափոխութեան հեղինակ, հրէաներին։ «Բէլօստոկում ճշմարիտ ռուս մարդիկ սկսեցին Ռուսաստանի փրկութեան գործը, իսկ մենք կը շարունակենք»։ Ճառախօսներ եղան և գօրօդօվոյներից։ Ամեն մի ժողովական տուեցին հարիւր թռուցիկներ բաժանելու իրանց շրջանում, որով կոչ էին անում անողորմ կերպով ջնջել հրէաներին։ Ցամառ լուր է պտտում, որ ժողովը կայացել է նահանգապետի թոյլատրութեամբ ու նրանք լաւ զինված են ոստիկանութեան օգնութեամբ։ Թէ որտեղ են տպագրել այդ թռուցիկները պարզել դեռ չէ յաջողվել։

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, յունիսի 18-ին, «Թիֆլիսի ժողովարանի» ձմեռային շինութեան մէջ կայացաւ քաղաքիս վաճառականների ընդհանուր ժողովը՝ «Թիֆլիսի առևտրական» արդիւնաբերական միութիւն կազմելու նպատակով։ Ժողովը բազմամարդ էր։

Վաճառականների աւագ ընկեր պ. Արշ. Միլովը, բացելով ժողովի նիստը, յայտնեց, որ դեռ անցեալ դեկտեմբեր ամսին, քաղաքիս առևտրականների և արդիւնաբերողների միութիւն սահմանելու մասով ընտրվեց մի յատուկ մանաժողով՝ 12 հոգուց բաղկացած, որին յանձնվեց մշակել «Միութեան» համար մի նախագիծ։ Այդ նախագիծը, ահա, ներկայումս պատրաստ է, ուստի այսօրվան ժողովը պիտի դրավի այդ նախագիծ քննութեամբ, որի համար առաջարկեց ընտրել ընդհանուր ժողովի նախագահ։ Ձայների մեծամասնութեամբ նախագահ ընտրվեց պ. Կոստ. Ալիխանով։ Թէ ինչ հիմունքներ են ծառայել այդ նոր «Միութիւնը» սահմանելու պ. նախագահը հանդամանորէն ծանօթացրեց ժողովականներին, որից պարզվեց հետեւեալը։

Մինչև 1898 թ., քանի որ արհեստագիտական հարկը (պրոմիսլօվոյ) գոյութիւն չունէր —1 և 2-րդ կարգի վաճառականների թիւը քաղաքումս հասնում էր 1000-ի, իսկ 1898 թւից յետոյ այդ թիւը շատ պակասեց, ուստի և գոյութիւն ունեցող վաճառականական վարչութիւնը (ուպրավան) այլ ևս չէր կարող բոլոր վաճառականների և արդիւնաբերողների ներկայացուցիչ հանդիսանալ, այլ հարկաւոր էր ստեղծել մի այնպիսի նոր մարմին, որը կարողանար քաղաքիս բոլոր առևտրականների և արդիւնաբերողների բերան և ներկայացուցիչ լինել, որոնց թիւը 3500-ից աւելի է. ահա այսուհետև ծագեց «առևտրականների և արդիւնաբերողների միութիւն» հիմնելու միտքը, որը իր կողմից կազմակերպվելուց յետոյ պիտի ընտրէ 1, 2 և 3-րդ կարգի արհեստագիտական վկայագրեր ունեցող առևտրականներից և արդիւնաբերողներից մի բիւրօ 12 հոգուց բաղկացած, որի մէջ պիտի մտնեն 3 հոգի գործակատարներից—որպէս ներկայացուցիչ գործակատարների դասակարգի—առևտրականների և գործակատարների մէջ յարաբերութիւնները կանոնաւորելու։

Այս բացատրութիւնից յետոյ ժողովը սկսեց կանոնադրութեան նախագիծը քննելու։ Այդ կանոնադրութիւնից երևում է, որ «Թիֆլիսի առևտրականների և արդիւնաբերողների Միութեան» նպատակը պիտի լինի՝ միացնել և աւելի սերտ կապակցութիւն սահմանել քաղաքիս առևտրական-արդիւնաբերական դասակարգի անդամների մէջ ընդհանուր վիճակը բարձրացնելու, առևտրի և արդիւնաբերութեան գործը յաջող պայմանների մէջ դնելու, իրանց անդամներին ամեն տեսակ օգնութիւն և աջակցութիւն տնելու։ Այս նպատակին հասնելու համար՝ «Միութիւնը» պիտի կազմակերպվի՝ 1) անդամների պրոֆեսիոնալ կարիքներին բաւականութիւն տալու, 2) իշխանութեան դիմումներ առնելու համար կարգ յօրինելու, 3) առևտրականների և գործակատարների մէջ յարաբերութիւնները կանոնաւորելու արդար հիմունքների վրա, փոխադարձ շահերի պաշտպանութեամբ, 4) իրանց անդամների և նրանց ընտանիքների համար կրթական և բարեգործական հիմարկութիւններ հաստատելու, այն է՝ առևտրական-արդիւնաբերական դպրոցներ, առևտրական դասընթացքներ, դասախօսութիւններ, ընթերցարան, կլուբ, ապատարան, հիւանդանոց, ազգքառանոց ծերերի և խեղանդամների համար և այլն։ Անդամներ կարող են լինել այդ «Միութեան» նրանք, որոնք ունին 1, 2 և 3-րդ կարգի արհեստագիտական վկայագրեր և մնացեալ 5 կարգի վկայագրեր արդիւնաբերական ձեռնարկութիւններով զբաղվելու։ Ժողովը այնուհետև քննելով կանոնադրութեան նախագծի մնացեալ յօդուածները ամենայն փոփոխութեամբ, ընդունեց այն և վճռեց՝ գոյութիւն ունեցող բիւրօի միջոցով կանոնադրութեան նախագիծը ներկայացնել իշխանութեան հաստատութեանը, որից յետոյ ընդհանուր ժողով հրաւիրել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պետերբուրգից յունիսի 16-ին հեռագրում են «Շրօմա» լրագրին հետեւեալը «Պետական Դումայում մեր պատգամաւորները ամեն օր խօսում են։ Ամենից քաջ խօսքերը և բողոքները նրանք են յայտնում։ Երկուշաբթի Բաթալովը և Ծերեթելին ճառ կարդացին խղճի ազատութեան, վրաց եկեղեցու և Զօսոորզովի վերաբերմամբ։ Պետական Դուման ուշադրութեամբ լսում է մեր պատգամաւորներին։ Պետական Դումայում էր գտնվում քահանայ Պետրովը և ասաց ինձ, որ վրաց եկեղեցին պէտք է բաժանվի սինոդից։ Այսօր Պետերհոֆ հրաւիրեցին Պետական Դումայի նախագահ Մուրոմցեվին։ Նրան յանձնում են կաբինետի կազմելը։ Կաբինետը կը մտնեն Միլիւկովը, Ուրուսովը, Կոնի Հէյդենը, Ստասովիչը։ Նախ Ստասովիչին ավին մինիստրութիւն կազմելու իրաւունքը, բայց նա մերժեց ասելով որ Դուման հաւատ չի ընծայի, և Մուրոմցեվին մասնացոյց արեց։ Ներքին գործերի մինիստրի օգնականին, Պետական Դումայի անդամներին անարգելու պատճառով առաջարկված է հրաժարվել պաշտօնից։

—

Բաթումից մեզ գրում են. «Արդէն 2 օր է, որ Մանթաշևի գործարանը աշխատում է։ Աշխատաւորների ուրախութիւնը չափ ու սահման չը կայ. միմեանց հանդիպելիս աչքերայոս են տալիս. փողոցներում ուրախութիւն է տիրում։ Առայժմս բոլորը չեն աշխատում, հերթով են աշխատում, մինչև գործը լիովին բացվի»։

—

Բաքումում մօտ ժամանակներս կայացած սոցիալ-դեմօկրատների միջազգային ժողովում հաստատվել է, իբրև պրօվօկատորական փաստ, որ յիշեալ կուսակցութեան տեղական խորհրդի նախագահ Լէվ Շէնդրիկօվը գաղտնի յարաբերութիւն է ունեցել կառավարութեան հետ։ Շէնդրիկօվը առաջարկել է կովկասեան Փոխարքայի դիւանատան կառավարիչ Զունկօվսկուն փոխելու իր գիրքը, եթէ տալու լինեն 30,000 ռուբլի։ Խորհրդի նախկին նախագահը արտաքսված է կազմակերպութիւնից։

—

Մօտ օրերս տպատված է «Նախնական բանտարկութեան մասից» Մելիք-Յովսէփեանց Իվան Օսիպովիչ, որ կալանաւորված էր անցեալ դեկտեմբերի 3-ին բանտարկան պատգամաւորների խորհրդի ժողովում և մեղադրվում էր 101, 112, 126 և 129 յօդուածներով, ուսանող պոլիտեխնիկական ինստիտուտի. ազատված է և ենթարկված է ոստիկանական հսկողութեան։ Աքսորվում է Դանձակի նահանգը 3 տարի ժամանակով։

—

Ազդեհաւների օգտին ստացանք. 1) Շիրվանից (Պարսկաստան) տեղական հայ հասարակութիւնից 46 ր., 2) Բաքուից—Մելիք-Բէկեանի գրասենեակի աւագ և կրտսեր ծառայողներից 13 ր. 88 կ., 3) Ղարսից—մէկ աշակերտական ներկայացումից Տէր-Ցարութիւնեանի միջոցով 13 ր. 85 կ., 4) Ուէրայ-Կրասնավոդսկից—Զհանգիր Առաքելեանի միջոցով 86 ր.։

—

Նոր ստացված գրքեր. 1) Արիւճի Աւետարան, գրամատիկական անցք 1 գրդ. հեղ. Պոլ Ի. Լուսաղօնի, թարգմ. Տ. Զաւէնի, հրատարակութիւն Գ. Գալստեանի, Թիֆլիս, 1906, գինն է 25 կոպէկ։ Սարսափի ու ատելութեան մի ճիչ է այս գործը՝ Պատերազմի դէմ։ 2) Հայրենասիրութիւն, գ. Կուսկու. հրատարակութիւն «Կայծի»-ի, Թիֆլիս, 1906, գինն է 3 կոպէկ։

—

Յունիսի 11-ին Բագի երկաթուղու ապրանքային կայարանի մօտիկ ճանապարհով դէպի Թիֆլիս էր գնում մի հայ բանւոր ձեռքին հաց բանած։ Ոչ հեռու կանգնած ակցիզնի զինուորը կանչեց նրա եռեից։ «Կանգնիր։» Բանւորը շարունակեց իր ճանապարհը պատասխանելով. «Ինչու կանգնեմ երբ ինձ մօտ ոչինչ չը կայ։» Դրանից յետոյ զինուորը վազեց հասաւ բանւորին ու սպանեց տարաձայնակի մի հարուածով։ Այդ սպանութեան վրա՝ կանները վազեցին քսանիս չարագործին, բայց նա փախաւ։ Նրան օգնութեան հասնող զինուորը սկսեց կրակել վկաների վրա ու յետ գնալ, որով վիրաւորեց մէկի ձեռքը ու կորեց մասը։

—

Ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութեան համաձայն «Գвоздь» լրագիրը դադարեցրված է մինչև զինուորական դրութեան վերացումը, իսկ նոյն լրագրի խմբագիր Ա. Ս. Լանդին քանտարկված է։ «Գուտենմերգ» տպարանը, ուր տպվում էր այդ լրագիրը նոյնպէս փակված է մինչև զինուորական դրութեան վերացումը։ (Ռ.)

—

Մինչև զինուորական դրութեան վերացումը դադարեցրած «Кавказское Утро» լրագրի խմբագիրը ինդրամատոյց է եղել լրագրի հրատարակելը վերանորոգելու համար։ (Ռ.)

—

Կիրակի, ցերեկվայ մօտ ժամը 2-ին, Պուշկինսկի փողոցով անցնող էլէքտրաքարշի վագոնի յետեւում կօնդուքտորը նկատել է, որ փոքրանակ 8 հոգու, կանգնած են 9 մարդ, վերջին կանգնած է եղել մի օֆիցէր։ Կօնդուքտորը առաջարկել է օֆիցերին վազօնից իջնել, օֆիցերն էլ իջել է։ Նոյն երեկոյեան, ժամը մօտ 8-ին, երբ նոյն վագոնը, (նոյն կօնդուկտորն էլ մէջը) անցնելիս է եղել Ելիզավետինսկի փողոցով, փողոցում անցնելիս է եղել նոյն օֆիցէրը պատրուակների հետ միասին։ Օֆիցէրը, ճանաչելով կօնդուքտորին, վազօնը կանգնեցնել է տալիս, կանչում է իր մօտ կօնդուկտորին և դիւորներին հրամայում է խուզարկել նրան։ Նրա մօտ ոչինչ չը գտնելով, ինքը և զինուորները ծեծում են նրան։ Վագօնում եղած հասարակութիւնը զայրացած այդ դէպքից ինքնակամ գնում են մօտակայ ոստիկանութիւնը և վկայում են կօնդուկտորի անմեղութեան և օֆիցէրի դատապարտելի վարմունքի մասին։ Նոյն օրը օֆիցէրը բարձր իշխանութեան հրամանով ձերբակալվեց։

—

«Times»-ը հեռագիր է ստացել Վիէննայից, որ Վիլհէլմ և Ֆրանց-Յովսէփ կայսրների տեսակցութեան ժամանակ գլխաւորապէս աչքի առաջ ունին քննելու իրերի դրութիւնը Ռուսաստանում, նամանաւանդ և կայսրների գործելու եղանակը այն դէպքում, երբ ընդհանուր ապատամբութիւն ծագելու լինի։

—

Մոսկվայի հաշտարար դատաւորների համագումարի նախագահ Մարտէնը համաձայն տեղական դատաւորների յայտնած ցանկութեան, որ ուզում են քննութեան ենթարկել Մոսկվայի բանտերում գտնվող փաստաթղթերը, մեծ հաշտարար դատաւորների ընդհանուր ժողով գումարել գործողութիւնների մէջ միատեսակութիւն հաստատելու համար, քրէակ. դատ. կանոնագ. 10 և 11-րդ յօդ. հիման վրա, և գոյութիւն ունեցող օրէնքների շնորհիւ հաշտարար դատաւորներին վերապահվող բոլոր իրաւունքները մանրամասն կերպով որոշելու համար։

—

Տպագրական գործի բանւորների միութիւնը որոշել է ողջունել բուլօչնիկների և կօնդիտերների կռիւը և կարողութեան չափ նոր ազատ աշակցութիւն ցոյց տալ նրանց իրանց կռիւը մինչև վերջ տանելու համար։

—

Ցամառ կերպով խօսում են, որ իբրև թէ զինուորական մինիստրութեան մէջ մշակվում է մի ծրագիր ազատակամ զինուորների ընդունելութիւնը զօրքը մէջ վերացնելու, աչքի առաջ ունենալով նրանց ապացուցված ցնաստակամ ազդեցութիւնը զինուորների վրա։ Մըտադրութիւն կայ, նախ քան այդ ծրագրի յայտարարելը և օրինական զօրութիւն ստանալը, գործադրելը առաջարկելու բոլոր գնդապետներին և բատալիոնի հրամանատարներին ազատակամ զինուոր չընդունել այնպիսիներին, որոնց մասին հաւաքած տեղեկութիւնները քաղաքական բարեւութեան կողմից թէկուզ փոքր չափով անհարմար են։ Իսկ մեծամասը պէտք է պատճառաբանել նրանով որ ազատակամների թիւը արդէն լրիւ է կամ այն իրաւունքով, որ օրէնքը գնդապետներին է վերապահում ըստ իրանց ցանկութեան ընդունել թէ չընդունել այդպիսիներին։ «Рѣчь»

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը այժմս սաստիկ զբաղված է հաշիւներ կազմելով Պետական Դումայի համար, որովհետև վերջինս հարցապնդում է արել գործադուլի համար արձակվածների թիւ և նրանց իսկական յանցաւորութեան մասին։ Հաւաքած տեղեկութիւններից, որոնք յայտնի չէին մինիստրութեանը, երեւց որ պաշտօնից արձակվածների թիւը 15,000 հոգուց աւելի է, որից մինչև այժմ ընդամենը վեր ընդունված է մօտ 4000։

—

Ռուսաստանի զանազան մասերից տեղեկութիւններ են ստացվում, որ այժմս գումարվող գիւղական ժողովներում գիւղացիները վճիռ են կայացնում հրաւիրելու քաղաքներից ճառախօսներ իրերի դրութիւնը և ժամանակից հրատապ հարցերը իրանց բացատրելու համար։

—

Մոսկվայի ժողովրդական ազատութեան կուսակցութեան կոմիտեը նամակ է ստացել Խէրսոնի նահանգի գիւղացիներից, որով նրա հեղինակները խնդրում են կոմիտեն խորհուրդներ տալ թէ ինչ պէտք է անեն գիւղացիները և ինչ դիրք բռնեն այն դէպքում, երբ Դուման փակեն։ Գիւղացիները կամենում են ընթանալ Դումայի բոլոր պաշտպանների հետ միասին։ «Ամենքը մէկի համար և մէկը ամենքի համար», ասված է նամակում։

—

«Рус. Сл.» լրագիրը հաղորդում է, որ Պարիզում, Ամֆիթեատրովի «Կարմիր դրօշակ»-ի կից հրատարակվում է «համաուսական միութեան գիւղացիների ձայն»-ը Ամֆիթեատրովի, Մազուրենկոյի և Կրնատովսկու խմբագրութեամբ։ Թիշեալ օրգանի մէջ տպագրված է Մազուրենկոյի յայտարարութիւնը, որ նա սարսափով է նայում գիւղացիների հաւանական տարերաւոր ապատամբութեանը։

—

Մոսկվայում մի նոր ընկերութիւն է հիմնվում, որի նպատակն է մարաւել հակասեմական տանջանքների դէմ և ոչնչացնել այն սխալ կարծիքը, որ կայութիւն ունի հրէաների և հրէութեան մասին։ Իր նպատակներին հասնելու համար ընկերութիւնը մտադիր է հրապարակական դասախօսութիւններ կարդալ, ժողովներ գումարել, լրագիրներ ու գրքեր հրատարակել, ընթերցարան - զբաղարաններ բանալ և այլն։ Ընկերութեան անդամ կարող են լինել երկու սեռի պատկանողները առանց սեռի ու կոչման խտրութեան։

—

«Страна» լրագիրը լսել է, որ գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի զինուորական գործունէութիւնը Հեռու Արեւելքում մեծ խնամքով քննվելու է բարձրագոյն զինուորական դատարանի առանձին մասնաժողովի մէջ։

—

Ֆինլանդիայում կայացած ուսուցչական և ժողովրդական կրթութեան գործիչների համագումարում տեղի ունեցաւ հետեւեալ դէպքը։ Համագումարի նիստերից մէկում ներկայ եղողները նկատում են մի կասկածաւոր անձնաւորութիւն։ համագումարի անդամները նրան կալանաւորում են և հարցաքրում ասել թէ ով է ինքը։ Անծանօթը իրան գաղտնի ոստիկան է անուանում ու յայտնում որ ուղարկվել է Վիբօրգից, և իբրև ապացոյց իր ասածների ներկայացրեց ծառայութեան տոմսը։ Այնուհետև օրվանից, Համագումարը այն ժամանակ յանձնում է նրան կարմիր գվարդիային, որը պահում է այդ գաղտնի ոստիկանին մինչև որ համագումարին մասնակցողները հեռանում են Ֆինլանդիայից։

—

«Дума» լրագիրը հաղորդում է. Պարիզից հեռագրում են արտասահմանեան լրագիրներից շատերին Լօնդօնից այնտեղ ստացված հետեւեալ տեղեկութեան մասին։ Էդուարդ թագաւորը հեռագրել է Պետերհոֆ, որով նա իր ջերմ ցաւակցութիւնն է յայտնում Բէլօստոկի քաղաքացիների անցքերի ապիթով և մեծագոյն ժամանակ ուշադրութիւն է հրաւիրում այն գայրոյթի վրա, որով համակված է դրա պատճառով ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։ Դիպլոմատիան և կայսրութեան շահի տեսակէտից, ասում է հեռագիրը, այլև մեծ պետութիւնների շարքում համապատասխան դրութիւնը պահպանելու համար, ընդմիշտ պէտք է վերջ տալ Բէլօստոկի անցքի նման տմարդի գործողութիւններին։

—

«XX Վեկ»-ը հաղորդում է, որ յունիսի 11-ին երեկոյեան ժամի 7-ին, 7-րդ Սիբիրեան զօրամասի օֆիցերները Էրմնատ հաշարանում մի ճաշկերոյթով պատվում էին իրանց հրամանատար գեներալ-լէյտենանտ Բենենկամպֆին։ Այդ ճաշկերոյթին մասնակցում էին 45 օֆիցերներ։ Գեներալը պատասխանում է գեներալ Գուրկոյի ողջոյնի ճառին և ի միջի այլոց ասում է, որ արդէն հրաման է ստացվել, իրան Իրկուսկ 3-րդ Սիբիրեան զօրամասի հրամանատար նշանակելու մասին։ «Ես բաղդաւոր եմ ասում է գեներալը, որ ինձ է վիճակվում Հեռաւոր Արեւելքի առաջապահ դիրքերում եղած զօրքին պատերազմի համար նախապատրաստելու պարտականութիւնը, որովհետև իմ մէջ դեռ վառ է անխախտելի հաւատը, որ հեռու չէ բէվանշի մօտենալը, մեծ Ռուսաստանի կողմից»։

—

Դերիւգինի ապակէ գործարանի վրա յարձակվեցին 30 զինակաւորված չարագործներ, բայց կողոպտելը չը յաջողվեց։ Շնորհիւ բանւորների ընդդիմադրութեան։ Բանւորներից մէկը սպանված է, մէկը վիրաւորված։ Կողոպտողները անյայտացան։ (Ռ. Ա.)

—

«Новое Время»-ն հաղորդում է. «Մինիստրների ներկայ կազմիկնի դրութիւնը, ինչպէս մենք ամենահաստատ ազիւրից լսեցինք, կատարելապէս ամուր է։ Լրագիրների հաղորդած լուրերը իբր Գօրեմիկինը ներկայումս հեռանում է մինիստրների խորհրդի նախագահի պաշտօնից, վճռական կերպով հիմքից զուրկ է։ Նոյնպէս սուտ են այն ենթադրութիւնները, իբր մինիստրների կազմի մէջ որ և է փոփոխութիւններ է սպասվում։ Համաձայնումը խատն մինիստրութեան, որը բաղկացած պէտք է լինի սահմանագիր-ռամկական ազատականներից և այժմեան մինիստրներից մի քանիսից, համարվում է վճռականօրէն անկարելի։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պօտիսկի փոստի վրա, Կարմանովի ամրոց տեղի ունեցաւ հետեւեալ տխուր դէպքը։ փոքր երեխաները բակում գտնվել էին խաղում, որը պատահմամբ ընկաւ նոյն բակում գտնվող ազատատ, բաւականաչափ խորը ջրհորը։ Երեխաներից մէկը, Զերմաշվցեվը, մտեցաւ ջրհորին, բայց ջրհորի գարշահոտութիւնից ուշաթափվեց և ընկաւ ջրհորը։ Օգնութիւն կանչելու ժամանակ մօտ վազեցին հարեւանները և նրանցից մէկը՝ Վասիլի Տրուշնովը թոկով իջաւ ջրհորը, բայց թոկը կտրվեց և նա էլ ընկաւ նրա մէջ։ Այնտեղ եղողներից մի քանիսը փորձեցին իջնել ջրհորը, բայց նրանցից ոչ մէկն անպամ չէր կարողանում հանել և վեր էին բարձրանում, համարեա ուշաթափած վիճակի մէջ։ Բայց ահա երեւաց Մաշալի-Զաֆար-Տագան-Վերլի-օղլի անունով մի Թուրք, որը վերջերս ճիրք և արհեստական կերպով գալը ջրհորից դուրս հանեց, մտաւ նրա մէջ, դուրս հանեց պատռեր ընկած երեւուին, որոնք, չը նայելով բժշկական անմիջական օգնութեան, հանեցին, անմիջապէս մեռան։ Հէնց իրան—Մաշալի-Զաֆար-Տագան-Վերլի-օղլուն նոյնպէս կիսամեռ դուրս հանեցին, բայց նոյնիսկ Թաղային բժշկի բժշկական օգնութեան ուշքի բերվեց և այժմ նրա առողջութիւնը բաւական է։ Թուրքի վարմունքը և նրա անձնուիրացութիւնը հիացմունք պատճառեց դէպքի տեղը ժողովված անձանց որոնք խնդրի ժողովեցին Թուրքի օգտին 10 ռուբլի և յանձնեցին նրան։

—

Գօրու գաւառի Զօչէրի գեղջկուհի Սիգօնյա Բովիլաշվիլին յայտնեց 1-ին քաղաքամասի ոստիկանութեանը, որ նա, երբ գիշերվայ ժամը 11-ին կայարան էր գնում, Բէլինսկի փողոցում մի անծայր երիտասարդ յարձակվելով կառքի վրա, նրա երեսին ածեց կաբոլի թեռուտ։ Բովիլաշվիլին կասած յայտնեց 1-ին գիմնազիայի նախկին սան Իրակլի Ամիրաջիբիի վրա։ Այդ գործի քննութիւնը պարզեց Ամիրաջիբիի մեղաւորութիւնը։ Սիգօնյային բժշկական օգնութիւն հասցրվեց, իսկ մեղաւորը յանձնված է դատարանին։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունիսի։ (Շարունակութիւն)։ Դուման ձեռնարկում է ժողովների ազատութեան օրինագծի քննութեան։

Զեկուցանող պր. Շերշենեվիչ բացատրում է, որ նախագիծը կազմված է անգլօ-ֆրանսիական ձեւով, և վերջում ասում է, որ Դուման չէ կարող յայտ ունենալ, որ օրէնքը կը գործադրվի, քանի որ իշխանութիւնը գանըվում է անպատասխանատու մինիստրների ձեռքում, բայց և այնպէս կարելի է յուսալ, որ երբ օրէնքը իր ոյժի մէջ մտնէ, այն ժամանակ նրա գործադրիը կը հանդիսանայ պարլամենտական մինիստրութիւնը։

Լէգենեկի պնդում է, որ անհրաժեշտ է օրինագծի մէջ մտցնել մի յատուկ բացատրութիւն իւրաքանչիւր ազգի իրաւունքների մասին, որով ամեն մի ազգ ժողովներում խօսել իր մայրենի լեզուով։

Դրանից յետոյ ձախակողմեան հեռատրները օրինագիծը ենթարկում են խիստ և մանրազրնին քննութեան։ Ի միջի այլոց, սոցիալիստների ներկայացուցիչը հանգամանքներից օգտվելով կարդում է սոցիալ-դեմօկրատական Դումայի ֆրակցիայի զեկուցագիրը։ Դեկլարացիան, խոստանալով Դումային պաշտպանել կամայականութեան դէմ մղվող կռիւում, յայտնում է, որ սոցիալիստները Դուման համարում են սոսկ անցողական մի էտապ դէպի հիմնագիր ժողով։ Սոցիալիստները ի միջի այլոց պահանջելու են, որ մշտական գօրքը փոխարինվի ժողովրդական միլիցիայով։

Այնուհետև օրինագծին, Բամիշվիլին և Բրամսոնը տեսնում են նրա մէջ ժողովների ազատութեան լոկ աւելորդ սահմանափակումներ և առաջարկում են որոշել, որ ժողովարդը իրաւունք ունենայ ժողովել ամենուրեք, ուր որ կամենայ։

Բամիշվիլին մի երկար ճառով ցոյց է տալիս, որ կառավարութիւնը չկատեց պատգամաւորներին, բայց Դումա ընկած այնքան էլ ոչ մեծ թով սոցիալիստները ունեն իրանց աջակից համայն ռուս ժողովուրդը, որը նրանց պաշտպանում է։

Զեկուցանող Շերշենեվիչը մանրամասն պատասխանում է արած բոլոր ընդդիմախօսութիւններին։

Կոմս Հէյդենը դալիս է այն համոզման, որ օրինագծի նկատմամբ միանգամայն կարելի է որոշել երկու հայեցակէտ—օրինական պետութեան և սոցիալիստական պետութեան։ Նա գտնում է, որ մարդկային անձնաւորութիւնը լիովին կապահովվի, եթէ Դումայում, նամանաւանդ ձախակողմեան հեռատրները օգտվելով սոցիալ-դ

չէ քննվել, զինուորական գլխաւոր դատարանին իրաւունք է տալիս—դատավճիռը ուղղելու ճանապարհով փոխել պատիժը այն դէպքում, երբ տեղական զինուորական դատարանը պարզ մի խոշոր սխալ է գործել։ Վարշավայի դատարանը սխալ չէ գործել Ֆոֆային փոխանակ մահվան պատիժ տալու—տաժանակիր աշխատանքների դատապարտելով։ Զինուորական գլխաւոր դատարանը միայն անցեալ տարվայ օգոստոսին իբր թէ օրէնքը մշակելիս——որոշել է մահվան պատիժը գործադրել և անչափահասների վրա։ Հոտաստը հաստատում է, որ զինուորական գլխաւոր դատարանը վարվել է ապօրէն կերպով, գործելով իրաւաքանական իրաւունքների հէնց իր տված կամայական դիտումների հիման վրա, զինուորական գլխաւոր դատարանը վարվել է բացարձակօրէն ապօրէն կերպով, (Ծափահարութիւններ)։ Հարցապնդումը ընդունվում է միաձայն և հերթական է ճանաչվում։

Հետևեալ հարցապնդման ձայնաւորութեան ժամանակ պարզվում է, որ Դուման անկարող է քննել—հարկաւոր թւով պահանջվող անդամների բացակայութեան պատճառով. որի համար և նիստը յայտարարվում է փակված 6 ժամ 45 րոպէին։

Հետևեալ նիստը կը կայանայ յունիսի 19-ին, ժամը 11-ին։ Վերջնականապէս կը քննվի մահվան պատիժը վերացնելու օրինագիծը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 յունիսի

ՄՈՍԿՎԱ, 17 յունիսի։ Արտամիէջների ընակարանում գտնվել են ռումբեր պատրաստելու մի լաբորատորիա և զէնքի պահեստ։ Գտնվել են պատրաստի ռումբեր, ռումբեր պատրաստելու կաղապարներ և մի քանի պուդ վառոդ։ Արտամիէջները ձերբակալված են։ Բռնված են 20 հոգի, որոնք պատկանում են զինված յարձակում գործող յեղափոխական խմբակին։

ՎԱՐՇԱՎԱ, 16 յունիսի։ Երեկոյեան ժամը 5-ին Տօրգովայա փողոցում, Պրագայում ռումբ է նետված երկաթուղային ժանդարմական վարչութեան կառավարիչ փոխ-գնդապետ Մուրգովի վրա, որը թեթև վիրաւորված է։ Ուղեկցող ժանդարմը և կառապանը վիրաւորված են ծանր կերպով։—Ցիտատելում գործադրվել է զինուորա-ղրջանային դատարանի վճիռը գիւղացի Իվան Կապաէվի վրա, որ մեղադրվելով սպանութեան մէջ—կախաղանի միջոցով մահվան էր դատապարտվել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունիսի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կից բացվեց միջնակարգ տեխնիկական կրթական հաստատութիւնների մանկավարժական խորհուրդների ընտրած ընտրեալների և վերատեսուչների խորհրդակցութիւնը։ Բացի ընտրեալ դասատուներից, իրաւունք է տուած մասնակցելու մի մի ներկայացուցիչով և տեսչական խորհուրդներին։ Խորհրդակցութեան նպատակն է որոշել այն միջոցները, որոնցով կարելի է վերականգնել նորմալ կեանքը միջնակարգ տեխնիկական դպրոցներում այս տարվայ աշունքից, և փոխել ըստ պահանջի—հէնց նոյն իսկ այդ դպրոցների կազմը։ Ժողովը բացից ժողովրդական լուսաւորութեան մինիստրը։ Շնորհաւորական ճառի մէջ, մինիստրը, ի միջի այլոց, ցոյց տուից, որ կրթական հաստատութիւնների խանգարութեան պատճառները երկու տեսակի են.—մի կողմից արտաքին, որ պարվակվում է մեր ներկայումս անցրած հասարակական շարժման և նշանակալից անցողական էպոխայի ընդհանուր տրամադրութեան մէջ, միւս կողմից—ներքին, կրթական հաստատութիւնների կազմակերպութեան գործի պակասաւորութիւնները։ Մինիստրութիւնը չէ կարող ձեռքերը ծալել և սպասել որ արտաքին պատճառները վերացվին. նա պէտք է հէնց այժմ և եթ ուշադրութիւն դարձնէ դպրոցի ներքին կեանքի վրա։ Զէ կարելի փակել աչքերը այն բանի առաջ, որ շատ և շատ դէպքերում մանկավարժական մարմինը իր կոչման բարձրութեան վրա կանգնած չէ լինում, և խուսափում է իր անմիջական պարտականութիւնից և կորցնում է անհրաժեշտը՝ իր հեղինակութիւնը պահպանելուց դրված։ Միւս կողմից և դպրոցի սահերը, որ տարվում են դպրոցին կողմնակի շարժումներով, այն ատիճանի կորցնում են իրանց դրութեան, պարտաւորութեան և կարգապահութեան գիտակցութիւնը, որ շատ և շատ դպրոցներում տեսնվում է այսպիսի մի պատկեր, որ իբր դպրոցը փողոցի է փոխվել, իսկ փողոցը փոխարինել է դպրոցին։ Ապա մինիստրը առաջարկեց բոլորովին պարզ և ազատ կարծիք յայտնել այդ անհօրմալ երևոյթների առաջն առնելու միջոցների նկատմամբ—նախօրօք մի ծրագիր մշակելով։

ՆՈՎՈՐՕՍԻՍԿ, 16 յունիսի։ Գործադուլ արին նաւահանգստային բանուորները, որոնք առաջադրել են մի շարք տնտեսական պահանջներ։

ԼՕՆԴՈՆ, 16 յունիսի։ Ստատս սէկրէտար Գրէյը բացատրական պատասխան է տուել պատգամաւորը Տօրնի առաջարկութեան, որը ցոյց է տուել որ անհրաժեշտ է հրաժարվել Բրիտանական էսկադրան կրօնշտատ ուղարկելուց, քանի որ Ռուսաստանում հրէաների ջարդ է տեղի ունենում։ «Մանչեստրը» հակառակ է խօսում այն անձանց դէմ, որոնք յեղափոխութեան կոչ են անում Ռուսաստանում, ապացուցանելով, որ Ռուսաստանի ամբողջութիւնը կը պահպանվի սոսկ զէնքով միայն, ուստի և, որպէս կառավարութեան ղեկավար, լորդը ագրարային պրոպագանդան ի զուր և վտանգաւոր է համարում, քանի որ կառավարութիւնը անկարող է հաստատել հողերի ընդհանուր գրաւման նախագիծը։ լորդի կարծիքով այդ կը նշանակէր քաղաքակրթութիւնը վերացնել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունիսի։ «Призывъ»-ի փոխարէն այսօր լոյս տեսած «Орывъ» լրագիրը գրաւվեց, որովհետև տպել էր Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական բանուորական ֆրակցիայի դեկլարացիան։—Ոստիկանութեան վարչութիւնը պատիրագրել է Խարկովի Կիևվի և Գրոդնայի նահանգապետներին—ազատել բանտարկված գիւղացիներին, որոնց թւում և գիւղացիական դաշնակցութիւն կազմակերպելու առիթով պրոպագանդա մղող 58 հոգուն։—Պետական Խորհրդի նիստը նշանակված է յունիսի 22-ին։

Առհասարակ մեկնող նաւերը լի են զինուորական ուժեղ պահակներով։

ԼՕՆԴՈՆ, 17 յունիսի։ «Թայմսը» ասում է, ու ռուս սոցիալիստների ասածները Դումայի գործունէութեան մասին ստիպում են երկիւղ կրել, որ նրանք Դուման համարում են դէպի հիմնադիր ժողով հասնելու տաջին ատիճանը։ Այդ շատ կարևոր է Անգլիայի համար, որ պատրաստ է ողջունել Դումայի ներկայացուցիչներին՝ որպէս միջազգայնական կօնֆերէնցիայի անդամների։ Լրագիրը յոյս ունի, որ այդ ներկայացուցիչները խիստ արտայայտութիւնների չեն դիմիլ, և այդպիսով անախորժ տպաւորութիւն չեն գործի տնտես—անգլիացիների վրա։

ՎԱՐՇԱՎԱ, 17 յունիսի։ Գաղային գործարաններից մէկի գանձապահից կողոպտիչները տարել են 2500 ռուբլի, իսկ քաղաքային գանձապահից՝ 3000 ռուբլի։

18 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի։ «Курьеръ» լրագրի խմբագիր-հրատարակիչ Ցիդէբրաումը և աշխատակից Խորդանսկին պատասխանատուութեան են ենթարկվում զրպարտութեան համար, որ արտայայտվել է նրանում, որ «Рѣчь» լրագրում խմբագրութեան ուղղած նամակում Մոսկվա թաղամասի պրիստաւի վրա անտեղի և անապացոյց մեղադրանքներ են բարդել։—Պարլամենտական մասնաժողովը քննելով պաշտօնական անձանց ապօրէն գործողութիւնները—յանձնարարել է պատգամաւոր Խրիստոֆսկուն՝ մշակել մի հարցապնդում, որ ներկայացվի զինուորական մինիստրին օֆիցէրների—Պետական Դումայի դէմ ագիտացիա մղելու առիթով, պատգամաւոր Շուլգին՝ լեհական թագաւորութեան մէջ անարգար կերպով զինուորական դրութիւն մտցնելու առիթով, պատգամաւոր Եակօբսոնին՝ գիւղացիական դաշնակցութեան դէմ հալածանք սկսելու առիթով։ Մասնաժողովը գտել է, որ կօզակները Սիմբիրսկի նահանգի ագրարային անկարգութիւնները զսպելու համար մի շարք վայրագութիւններ և խժդժութիւններ են գործադրել։ Ձերբակալութիւնների և աքսորի բոլոր հարցապնդումները վերածված են երկուսի։—Ագրարային պարլամենտական մասնաժողովը որոշել է առաջին հերթին դնել հաւանական օրինագծերի մշակումը. 1) հողային բարենորոգման հիմնական կէտերը. 2) տեղական հողային բարեկարգիչ հաստատութիւններ. 3) կապալների կանոնաւորումն և կարգաւորումն. 4) զինական բանուորների շահերի օրէնսդրական պահպանութիւն, և երկրորդ հերթին դնել գիւղատնտեսական փոխատուութեան (кредитъ) հարցը՝ գիւղատնտեսութիւնը զարգացնելու և կուլտուրապէս բարելաւելու համար։ Ագրարային փոխ-մասնաժողովը—հողերի ստիպողական գրաւման հարցի նըկատմամբ ընդունել է 42 անդամների գրութիւնը, բացառութեամբ սեփական ցուցակագրած մշակած հողերի։ Մասնաժողովը մտադիր է այդ հարցը դնել այնպէս, որպէս զի այդօրինակ հողերի որոշ մասը պարտաւորապէս ստիպողաբար գրաւվի, որի չափը կարելի է որոշել օրէնքով—նախօրօք տեղական անհրաժեշտ տեղեկութիւնները ժողովելուց յետոյ։—Պարլամենտական մասնաժողովը վերջացրել է անձի անձեռնմխելիութեան օրինագծի քննութիւնը։

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան պարլամենտական ֆրակցիան վերջացրել է մասուլի վերաբերեալ օրինագծի քննութիւնը և վերջնական մշակելու գործը յանձնել է պատգամաւոր Իօլսոնին։—Պարլամենտական ֆինանսական մասնաժողովը որոշել է պահանջել ֆինանսների մինիստրութիւնից տպված բոլոր նիւթերը՝ ֆինանսական վարչութեան գործողութիւնները ուսումնասիրելու համար։—Մուսուլմանների պարլամենտական ֆրակցիան որոշել է թոյլատրել իր նիստերին մասնակցութիւն ունենալ խորհրդակցական ձայնով և Պետերբուրգի մուսուլմանների ներկայացուցիչներից 3-ին. Ֆրակցիան իր պաշտօնական օրգան հրատարակել է «Рѣчь» լրագիրը։ Բաղդաւեհների գործաթող ծառայողները այսօր աշխատանքի կոչվեցին։ Բանուորների պահանջներին—բանուորական օրը կրճատել, աշխատավարձը աւելացնել, սնունդը բարելաւել—բաւարարութիւն է տրված։—«Русскій Инвалидъ»-ը հերքում է «Голосъ» լրագրի հաղորդած լուրը, որ իբր Սեմիոնովսկի գնդի մէջ յուզմունք կայ, յուզմունք բնաւ չէ եղել. միւս կողմից ոչ միայն լրագիրը չէ խլվում զինուորների ձեռքից, այլ ընդհակառակը, հրամայված է կարդալ և գնդին վերաբերեալ տեղերը բացատրել զինուորներին, «Двадц. Вѣкъ»-ի հաղորդած լուրն ևս, որ իբր գեներալ Մինի զինուորները քօչկօտ են յայտարարել և կրանի Սէլոում զինուորների մի մեծ միտինգ է տեղի ունեցել,—սխալ է։ Իսկապէս, միտինգ եղել է, բայց ներկայ են եղել ընդամենը 4 զինուոր, երկու կողմնակի անձինք և երկու կին, որոնք բոլորն էլ ձերբակալված են։

ԲԻԼՕՍՏՕԿ, 18 յունիսի։ Յունիսի 16-ին երեկոյեան գեներալ-նահանգապետի տան մօտ մի ոստիկան տարհանակ է արձակում։ Ջայնը դուրս է կոչում Ուգլիցկի գնդի օֆիցէրին, որին ոստիկանը հաղորդում է թէ՝ հրէաները կրակին ապտամբվել են ուզում և կրակում են։ Սակայն օֆիցէրը համոզվել է, որ արձակել է ինքը, ոստիկանը և հրամայել է անպիտանին անմիջապէս ձերբակալել։ Այդ դէպքի մասին զեկուցել են գեներալ-նահանգապետին։

19 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի։ Ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ և մինիստրի օգնականներ Կրիժանովսկու և Մակարովի և վարչութիւնների վերատեսուչներ՝ Աբրուզովի և Վլադիմիրովի ներկայութեամբ կայացաւ մի մասաւոր խորհրդակցութիւն։ Քննվում էր Պետական Դումայի մշակած խղճի ազատութեան նախագիծը։ Խորհրդակցութիւնը նախագիծը ընդունելի համարեց, միայն մի քանի կէտեր դուրս հանելով։ Կայսերական անձնապահ գունդը «Новое Время»-ում տպած նամակով հերքում է «Наша Жизнь» լրագրի հաղորդած լուրը, որ իբր կայսերական անձնապահ զինուորները Պետերբուրգում միտինգ կազմեցին, իբր կայսրը պատմամբ տեսնելով հաւաքվածներին, դիմեց դէպի նրանց կողմը Զինուորները ցրեցին իրանց զօրանոցները, օֆիցէրները հետևեցին նրանց օրինակին։ Կայսրը, անցնելով զօրքի միջով, շնորհակալութիւն յայտնեց օֆիցէրներին և զինուորներին—հաւատարմութեան և օրինակելի ծառայութեան համար։ Նոյն օրը լէյբ.-գրենադերական զինուորները պալատ հրաւիրվեցին նախաճաշի։ Այդ եղաւ Նոր-Պետերհոֆում, ուր նախօրօք եկել էր գունդը ծառայակատարութեան համար։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 18 յունիսի։ 5 օրեայ ընդմիջումից յետոյ Օդեսսայից եկաւ և անցաւ դէպի Սև Ծովի նաւահանգիստները «Ռուսաց նաւագնացութեան և առևտրի ընկերութեան» շոգենաւը զինուորական պահակներով։ Ծովի հաղորդակցութիւնը այսուհետև փոխանակ 12 շոգենաւերի—կը պաշտպանեն 2 նաւ։

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ, 18 յունիսի։ (Պաշտօնական թղթակից)։ Զարդերի և ապտամբութեան մասին տարածված յամառ լուրերը—ձեռք բերած միջոցների շնորհիւ—վերացան։ Ազգաբնակութիւնը հանգստանում է։

ՎԻՆՆԱ, 18 յունիսի։ (Պաշտ. թղթակից)։ Երեկ, Լէվինի քաղցրաւենիների խանութում—հէնց իրա Լէվինի խնդրանօք ոստիկանութիւնը դարանամուտ եղաւ՝ բռնելու այն անյայտ անձանց, որ մահվան սպառնալիքով փող էին պահանջել։ Երեկոյեան ժամի 10-ի մօտերը, ոստիկանական պաշտօնեաները պայմանաւորեալ նշանով ներս մտան և յարձակվեցին այնտեղ կկող 12 հրէաների վրա։ Լէվինը սկսեց աղաղակել, որ դրանք փող պահանջողներ չեն և շտապեց ազատել նրանց։ Օգտվելով իրարանցումից, չարագործները փախան, նախապէս կրակելով ատրճանակներից և վիրաւորելով ոստ. վերակացուին, և ոստիկաններից երկուսին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուվիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից՝
ԱՌԱՒՕՏՅՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և մեղասեռ. հ.
Կ. Մ. ՁԻՆՕՎՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԽԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆՈՎՍԿԻ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԶԳԵԼԻՆԻ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԱՅԵՆԿ Ա. Ի. ՇԱՊԵՐԲՈՒՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՍԻՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ԱՐՏԱՆ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաստ.։
Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախտհիդի (խոնջուկի) և ոգեբուժության համար առանձին հիւանդասենեակ վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. ՄԻՒԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ հանգային ջրերում. Գիպսօթոդսկ հիւանդանոց Բօսսիա № 14. վենէրական և մորթու հիւանդութիւններ։ Гостиница Россія № 14. 5—20

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մանագէտ միզային, վենէրական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպէկտի և Կագետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կագետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 177—300

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒԱՆԴԱՆՈՑ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՅԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Յարութիւնով
(հ. կ. ե.) 27—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ի. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մանագէտ միզային, վենէրական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմիոնովսկի փողոց № 16։
(ու. կ. ե.) 20—20

ԼՈՒՍ ՏԵՍԱԻ
և վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ
(Բ. Շտերնի)
Կուլտուրական պատկերներ Թիւրքիայից։ Գերմաներէնից թարգմ. Լևոն Բարայեան։
(ա.օ.) 4—5

ԵՐԵՒԱՆ քաղաքի ս. Յովհաննէս եկեղեցու համար ՀԱՅԿԱՒՈՐ են երկու քահանայագուներ, որոնք պէտք է ունենան Դէորգեան ճեմարանի կամ թեմական դպրոցի աւարտման վկայագիր։ Ցանկացողները կարող են դիմել Երևան՝ նոյն եկեղեցու ծխականներից ընտրված քահանայական յանձնաժողովի անդամ պ. Միքայէլ Աթանասեանին։ 4—6

Արձանագրած Միքայէլեանի յունիսի 4-ին խաղացված վիճակախաղի տոմսերի №№-ը.
1/850, 2/158, 3/79, 4/1254, 5/1494, 6/244, 7/751, 8/1287, 9/1308, 10/87, 11/682, 12/835, 13/186, 14/641, 15/184, 16/1382, 17/756, 18/114, 19/40, 20/978, 21/588, 22/1320, 23/1294, 24/642, 25/1336, 26/36, 27/746, 28/86, 29/1355, 30/784, 31/247, 32/1402, 33/1063, 34/94, 35/586, 36/671, 37/454, 38/111, 39/1396, 40/524, 41/208, 42,790, 43/1280, 44/1490, 45/1286, 46/544, 47/1419, 48/868, 49/419, 50/205, 51/130, 52/760, 53/1354, 54/1265, 55/959, 56/572, 57/1039, 58/1010, 59/154, 60/649, 61/468, 62/1349, 63/662, 64/953, 65/56, 66/841, 67/1241, 68/1448, 69/1335, 70/146, 71/1016, 72/95, 73/674, 74/1376, 75/1046։

ՀԱՄԱՐԻՉՆԵՐԸ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐՆ ԵՆ, ԻՍԿ ՑԱՑՏԱՐԱՐՆԵՐԸ—ՏԱՐԱԾ ՏՈՄՍԵՐԻ
Մ. Միքայէլեանի տպրիեի հասցէն. Աբասաբադսկայա հրապարակ, № 23։
(Ե.) 1—1

„Գուտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են
Շեէրն, Ի. Մարիսի յաւելեալ արժէքի թէորիան, ռուսերէնից թարգմ. Ս. Ղ. 5 կ.։
Շեէրն Բ. Հիւանդ մարդը, կուլտուրական պատկերներ Թիւրքիայից, թարգմ. Լ. Բարայեանի, 30 կ.։
Կաուցկի Կ. Աւստրիայի ճգնաժամը, (Լեզու և ազգ) թարգմ. ռուսերէնից, Գ. Պապովեան, 6 կ.։
Պոլ Իսաէնթ Լուսգօնի, Արիւնի Աւետարանը, դրամատիկական անցք մի գործողութեամբ, թարգմ. ֆրանսերէնից, Տ. Զաւէն, 25 կ.։
Նշտար, Սեռական կեանք, 20 կ.։
Նոր-Դոս, Նորածին մանուկը 3 կ.։
Մրաւեան, Ժամանակ է սթափվելու, 15 կ.։
Քուշներեան, Հ. Ք. Վ. Առակք, Ծաղկաքաղ և Ինքնագիրք, 1 ր. 25 կ.։
Շահրիար, Արամի պսակը, հայ-թուրքական ընդհարումներից մի պատկեր, 6 կ.։
Մատթէօ Ֆալկոնէ Մատնիչը, Լրտեսը, 7 կ.։
Խաչատրեան Ֆ. Ծննդեան ընծայ, 5 կ.։
Մանուէլեան Մ. Էսքիզներ (1 պատկերով) 40 կ.։
Կաուցկի Կ. Աւստրայի ճգնաժամը. (Լեզու և ազգ) ռուսերէնից թարգմ. Ա. Ս. 7 կ.։
Տէր-Սահակեան Հ. Կ. Հայ կայսերք Բիւզանդիոնի, ա. հատ. 1 ր. 25 կ.։
Տօլստոի Լ. Ն. կոմս, I Աստրեստանի արքայ Ասասրհադդօնը, II Երեք հարց, թարգմ. Գրիգոր Շահրուդաղեանց, 5 կ.։
Նեմիրովիչ-Դանչենկօ Վ. Ի. Կենդանացած երգը, պատմուածք, թարգմ. Վ. Թումանեան, 10 կ.։
Գասպարեանց Յ. Օժանդակիչ ձեռնարկ ժայրենի լեզուի, հայերէն ուղիղ կարդալ ուսուցանելու, 7 կ.։
Սարպաս, Խիլաֆաթ, պատմական հետազօտութիւն, 50 կ.։
Նալբանդեան Ա. Առակներ գրեալ 1900—1904, 30 կ.։
Զէյդել Ի. Նորմալ բանուորական օր, ռուսերէնից թարգմ, Մ. Եսայեանց, 5 կ.։
Շերէներ Օ. Անուրջներ, 15 կ.։
Անդրէեվ Լ. Սատիրն, հոգեբանական էսքիզ, թարգմ. Սուրխաթեանց, 10 կ.։
Հասցէն՝ Книжный магазинъ «Гуттенбергъ».
1—2

Կիրակի, յունիսի 25-ին, առաւօտեան 10 ժամին կը կայանայ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ-ՆԱԻԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ակցիօներների ընդհանուր ժողովի շարունակութիւնը։
1—1

Թիֆլիսի շոգեմեքենայական հացթուխարանի
„ԶԱՐԵԱՑ“
Ընկերութիւնը որոնում է իր մի քանի բաժանմունքների համար հացավաճառի պաշտօն կատարող հայ օրիորդներ և կամ տիկիններ։ Ցանկացողները դիմելու են ընկերութեան գրասենեակը, (Ելիսավետեան և Բատարէյ նաակ փողոցների անկիւնը)։ 1—1

8 տարի ուսուցչութիւն և խմբապետութիւն արած
ՆԵՐՍԻՍԵԱՆԱՒԱՐՏ
ՄԻ ՔԱՀԱՆԱՅ
որոնում է նահանգական կամ գաւառական քաղաքներում ՏԵՂ։ Համաձայն է դպրոցներում աւանդել գասեր, եկեղեցու համար ըստ եկամտի ներդաշնակութեան քառաձայն խումբ կազմել։ Բանակցել այս հասցէով՝ Карасубазаръ (таврич. губ.) Армянскому Священику Тер Гарегину Асрияацъ.
(Հ. հ.) 1—6

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխաիլ Լեբեդեվի
„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաքու, Բաթում։
10, 20, 30 7—40

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ԶԱԽԱՐԻԷԴԵԱՆ
Ներքին եւ նեարվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16։ Տելեֆոն № 1087։
(ա. օ.) 48—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վերեմինսկայա փողոց № 8։ (Հ.ո.)80—100

ԲԺԻՇԿ
Տ. Իսահակեան
Ներքին, երեխայոց և վենէրական հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտ։
Վերեմինսկայա փողոց № 22, Նաւտիկովի տանը։ (Հ. հ. շ.) 2—15

Լոյս տեսաւ
ԱՌԱՔԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
ԱՌԱԿՆԵՐԸ
Գինը 50 կոպէկ
Ծախվում են «Կենտրոնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներում։
(Հ. շ. ե.) 6—6

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօտային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երկ.
Թիֆլիսից դուրս գալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՆՈՐ ԿԵԱՆՔ“
Գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթի, որ հրատարակվելու է Նոր-Խիջևանում—1906 թ. յուլիսի 1-ից։
«Նոր կեանքը» լինելու է առաջադիմական և պատկանելու չէ որ և է կուսակցութեան։ Շաբաթաթերթիս բաժիններն են 1) Առաջնորդող. 2) Ժամանակակից հարցեր. 3) Տեղական կեանք. 4) Գաւառական կեանք. 5) Գրական բաժին (ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ, բելլետրիստիկա, բանաստեղծութիւն և այլն) 6) Արտասահմանի կեանք. 7) Քրօնիկան. 8) Մատուլ. 9) Թատրօն և գեղարուեստ. 10) Շաբաթվայ լուրեր. 11) Գրախօսութիւն. 12) Թղթակցութիւն. 13) Խառն լուրեր. 14) Յայտարարութիւններ։
Գինն է յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 2 ռուբլի։
Հասցէ՝ Нахичевань На-Дону 1-ая Соборная ул. № 23։
Հրատարակիչ՝ Գր. Բեղլեան
Գր. Անտոնեան
Պատասխանատու խմբագիրներ՝ Յակ. Տէր-Մանուէլեան
(Կ. Ե. Հ.) Յովհ. Խաչատուրեան
9—12

1896
ՅԱՂԻԿՆԵՐԻ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԿՕՆ.
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ամեն մրցութիւնից բարձր։
(ամ. 20)
10—12

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5